Azg
armenian daily

4 ՄԱՅԻՍ 2000 ՀԻՆԳՇԱԲԹԻ 81 (2049)

Հայաստանն ու Ադրբեջանը առաջիկա ամիսներին կդառնան Եվրախորհրդի անդամներ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, 3 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանն ու Ադրբեջանը առաջիկա ամիսներին կդառնան Եվրոպայի խորհրդի անդամներ: Այս մասին Ստրասբուրգում մայիսի 3-ին հայտարարել է մի դիվանագետ: «Ազատությունը» վկայակոչելով «Ֆրանսդրեսին» հաղորդում է, որ այս հարցը Խորհրդարանական Վեհաժողովի հանձնաժողովի օրակարգում է լինելու մայիսի 15-17-ը անցկացվելիք հանդիպման ժամանակ: Երկու երկրները կարող են դառնալ Եվրախորհրդի 42 եւ 43-րդ անդամները, եթե Վեհաժողովը դրա օգտին քվեարկի հունիսին Ստրասբուրգում կայանալիք լիագումար նիստի ժամանակ: Եվրախորհրդին անդամակցած Վրաստանի նախագահի խոսնակը մայիսի 4-ին հանդիպելու է իր հայ եւ ադրբեջանցի պաշտոնակիցների հետ՝ այս հարցը քննարկելու նպատակով: 3 պաշտոնյաները մայիսի 5-ին մասնակցելու են Եվրոպայի խորհրդարանական ներկայացուցիչների միջեւ անցկացվելիք բարձր մակարդակի հանդիպմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀՀ նախագահի հրամանագիրը մեկ օրում ընդունած որոշման արդյունք չէ

Պատասխանում է նախագահի մամլո քարտուղար Վահե Գաբրիելյանը

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
«Ինտերֆաքս»

– Վարչապետ Արամ Սարգսյանին պաշտոնից ազատելու հրամանագիրը ստորագրելուց հետո Նախագահ Քոչարյանը հանդես եկավ հայտարարությամբ, որում խոսվում էր երկրում ստեղծված մթնոլորտի եւ տարբեր նախարարների հաղթական խաղերի մասին: Չէի՞ մասնավորեցնի, թե ինչի մասին է խոսքը:

– Խոսքն առկա լարվածության, ոչ ա-

խաղաղային մթնոլորտի մասին էր, որ որոշ պետական ծառայողներ, օգտագործելով իրենց տրամադրված պետական լծակները, իրենց անմիջական պարտականություններով զբաղվելու փոխարեն, զբաղվում են քաղաքական հարցերով եւ ինտրիգներով, բացահայտ գործունեություն ծավալում երկրի նախագահի դեմ: Կարծում եմ, հարկ չկա բացատրելու, որ դա անթույլատրելի է: Եթե այդ մարդիկ քաղաքականությամբ զբաղվելու անդիմադրելի ցանկություն ունեն, կարող են բավարարել իրենց ցանկությունը, բայց ոչ միաժամանակ պետական բարձրաստիճան ծառայողի դիրք գրավելով:

– Ովքե՞ր են այդ մարդիկ եւ ինչո՞ւ նրանց ազատելու փոխարեն պաշտոնանկ արվեց վարչապետը:

– Առաջիկա զարգացումները, կառավարության նոր կազմը պատասխան կտան այդ հարցին, իսկ վարչապետին մի քանի անգամ առաջարկվել է հրաժարվել այդ մարդկանց ծառայություններից, ինչին նա չի համաձայնել: Հրամանագիրը մեկ օրում ընդունած որոշման արդյունք չէ:

– Ինչպե՞ս է նախագահը գնահատում հոկտեմբերի 27-ի իրադարձությունների քննությունից Գագիկ Տիանգիրյանի հրաժարվելու փաստը: Ինչպիսի՞ն կլինի նրա արձագանքը, եթե Տիանգիրյանը լսումներ անցկացնել պնդի:

– Որքան ինձ հայտնի է, հարցը կարգավորված է, հայտարարությունն ըստ երեւույթին արվել է զգայական մթնոլորտում: Իմ տեղեկություններով, Տիանգիրյանը երբեւէ չի պնդել, որ պետք է լսումներ լինեն:

– Կցանկանայի մի քանի հարց տալ Լեռնային Ղարաբաղի հետ կապված: Շուտով այնտեղ տեղի կունենան Ազգային ժողովական ընտրություններ, ինչի կապակցությամբ խիստ հայտարարությամբ հանդես եկավ Ադրբեջանի արտգործնախարարությունը՝ դրանք հանդիսանալով ապօրինի գործողություն: Տես էջ 2

Առայժմ Ռ. Քոչարյանը կգլխավորի կառավարության նիստերն ու աշխատանքը

Այսօր, ինչպես ամեն հինգշաբթի, տեղի կունենա կառավարության նիստ, որը կգլխավորի հանրապետության նախագահը: Վերջինս մինչեւ նոր վարչապետի ու կառավարության կազմի նշանակումը, կգլխավորի ոչ միայն կառավարության նիստերը, այլեւ ողջ աշխատանքը: Ակնկալվում է, որ Ռ. Քոչարյանն առայժմ իր աշխատանքային օրվա կեսը կանցկացնի կառավարության շենքում: Սա մի վիճակ է, որում նախագահն այլ՝ վարչապետի հանգամանքով, եղել է, երբ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո վարում էր նաեւ նախագահական գործերը:



ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«Ի վերջո, պիտի ունենա՞նք միասնական ու սկզբունքային կառավարություն...»

ՀՌԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանի տեսակետը

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

– Պրն Միրզախանյան, նախագահի՝ մայիսի 2-ի հրամանագրերի արդյունքում կարո՞ղ ենք գոնե ինչ-որ չափով երաշխավորել դրական տեղաշարժեր առաջիկայում:

– Իրադարձությունների զարգացումը ցույց կտա: Առայժմ ունենք նախագահի հրամանագիրն, ուր հստակ նշված է հետեւյալը. երկրի համար ծանր սոցիալ-տնտեսական այս պայմաններում, երբ մեծ չափերի է հասել արտագաղթը, նախագահն ու կառավարությունը պիտի միասնաբար հանդես գան: Բնականաբար, եթե մինչ այժմ այդ փոխհամաձայնությունը վերին օղակներում բացակայել է, ի՞նչ դրական տեղաշարժեր կարող ենք հուսալ: Մինչդեռ այսօր ավելի քան անհրաժեշտ է կազմակերպված ու ամբողջական գործադիր իշխանություն: Որպեսզի քաղաքական չլինի, որպեսզի Սահմանադրությունը լիարժեք գործի, օրինաքաղաքական խախտումները՝ վերին ինչ օղակներից էլ լինեն, պիտի նախեւառաջ կրեն պատասխանատվություն, ի հարկին սանան արժանի պատիժը: Սա եւս դրական տեղաշարժերի ու զգոնության հիմք կդառնա:

Փաստորեն, վերջին փաստը՝ բաբիչ ցանցերը սեփականաշնորհման ցուցակից հանելը ցույց տվեց, որ վարչապետն ու «Միասնությունն» էլ այլեւս համակարծիք չէին: Նրանք հանդես էին գալիս տարբեր դիրքորոշումներով, ապա հրապարակավ խոստովանում իրենց փոխադարձ «սերը»: Այս ամենից տղայական ընկերության բնույթի հարաբերությունների հոտ էր փչում եւ ոչ թե պետական մտածողության, գիտակից քայլերի: Սա էլ իր պարզ բացատրությունն ունի. այսօրվա խորհրդարանական մեծամասնությունը զուրկ է ձեւավորման գաղափարական հիմքից: Այս մեծամասնությունն իրոք մեծամասնություն էր, երբ դրա գլուխ էին կանգնած քաղաքական վաստակաշատ Դեմիրճյանն ու Սարգսյանը: Իսկ հիմա, երբ նրանք չկան, այս մեծամասնությունը լոկ թվաբանական է պահում:

Տես էջ 3

Un grand bravo á Aznavour

Ազնավուրի ոչը Ֆրանսիայի Սենատի նախագահին

Շառլ Ազնավուրը մերժել է Ֆրանսիայի Սենատի նախագահ Քրիստիան Պոնսլեի առաջարկը՝ ապահովել հուլիսի 14-ին, Ֆրանսիայի ազգային տոնի առթիվ Լյուքսեմբուրգյան այգում կազմակերպվելիք հանդիսության գեղարվեստական մասը: Աշխարհահռչակ ֆրանսահայը չի կատարի իր երգերը Սենատի նախագահի ընդունելությանը՝ ֆրանսիացի այլ բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ, տեղեկացնում է փարիզյան «Յառաջ» օրաթերթը՝ հղում կատարելով ֆրանսիական «Le canard enchaine» հայտնի երգիծական պարբերականին: Պարբերականը սույն փաստի առիթով հիշեցնում է Հայոց ցեղասպանությունն ընդունելու Սենատի կրկնակի մերժումը:

Այս պատճառով էլ, գրում է ֆրանսիական թերթը, Շառլ Ազնավուրը, զորակցելով իր հայրենակիցների ըմբոստացմանը, «ոչ» է պատասխանել Պոնսլեի առաջարկին՝ մասնակցել 15 մլն ֆրանկի ծախսեր նախատեսող հանդիսությանը: Նա վճռականորեն մերժել է իր ձայնը Սենատի նախագահին՝ ի նշան վրդովմունքի Հայոց ցեղասպանության հանդեպ նման անարդարացի վերաբերմունքի առթիվ:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

«Պաշտպանության նախարարությունում ամեն ինչ նորմալ է»

Հավաստեց նախարարի պաշտոնակատար Միխայել Հարությունյանը

«Պաշտպանության նախարարությունում ամեն ինչ նորմալ է, բոլորը զբաղվում են իրենց գործերով, ոչ մի պրոբլեմ չկա», երեկ ժպտալով ինքնավստահ հավաստեց ՀՀ գլխավոր շտաբի պետ, պաշտպանության նախարարի պաշտոնակատար գեներալ-լեյտենանտ Միխայել Հարությունյանը: **«Ազգի»** հարցին նա պատասխանեց, որ Վաղարշակ Հարությունյանին ոչ ոք չէր կարող արգելել պաշտոնանկությունից հետո մուտք գործել նախարարություն. «Այդպիսի բան չի կարող պատահել: Բանակում պրոբլեմ իրոք չկա՝ ոչ երեկ եւ ոչ էլ այսօր, երբեք էլ չի եղել, իսկ քաղաքական հարցերում պրոբլեմներ ես չգիտեմ, ես զինվորական եմ եւ բանակով եմ զբաղվում»: Նա պաշտոնապես նաեւ հերքեց ռուսական զենքը՝ ի մասնավորի հրթիռները, երրորդ կողմին վաճառելու որեւէ գործարքների բացահայտման փաստերը, որոնցով, ըստ որոշ լուրերի՝ Հայաստանում զբաղվում է ռուսական անվտանգության ծառայությունը. «Իհարկե, այդպիսի բան չի եղել եւ չի էլ լինի»: Միխայել Հարությունյանը նշեց, որ նախարար դառնալու մեծ հավակնություն չունի. «Իմ պաշտոնը շատ մեծ պաշտոն է, եւ իմ ցանկությունն է, որ մենք ունենանք լավ նախարար՝ լինի քաղաքացիական պաշտոնյա, թե զինվորական»: Այսպիսով, Միխայել Հարությունյանը լիովին բացառեց այն տեսակետը, թե պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանի պաշտոնանկության հրամանագիրը ստորագրելով, Ռոբերտ Քոչարյանը կանխել է բանակում ինչ-ինչ հուզումների եւ ըմբոստացման հնարավորությունները: Իսկ Վահան Շիրխանյանը բացառեց նախագահի հրամանագրի ոչ սահմանադրականությունը, որի մասին դատողություններ կան ԱԺ-ում. «Ռոբերտ Քոչարյանն պաշտոնանկել է Վաղարշակ Հարությունյանին որպես բարձրագույն հրամանատարական կազմի անդամի»: Սահմանադրությամբ նախագահը ՀՀ զորքերի գերագույն հրամանատարն է, վարչապետի ներկայացումը նախագահին պաշտպանության նախարարների պաշտոնանկության համար անհրաժեշտություն չհամարվեց:

Ն. Դ.

Հոկտեմբերի 27-ի գործով նոր մեղադրյալ

ԵՐԵՎԱՆ, 3 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: **Հոկտեմբերի 27-ի գործով նախաքննությունն իրականացնող զինդատախազությունը որոշում է կայացրել Երեւան քաղաքի բնակիչ Սաշիկ Ղլեչյանի (1941 թ. ծնված) ՀՀ ՔՕ 232 հոդվածի առաջին մասով՝ որպես մեղադրյալ դատական գործում ներգրավելու մասին: Ինչպես հայտնեց զինդատախազության քննչական բաժնի պետ, քննչական խմբի ղեկավար Արտակ Հարությունյանը, մեղադրյալը առանց համապատասխան թույլտվության պահվող SS մակնիշի ատրճանակը 1999 թ. սեպտեմբերին հանձնել է մեղադրյալ Դերենիկ Բեջանյանին, որը ահաբեկչական ակտը իրականացրած հիմնական խմբի մեջ է: Նախաքննական մարմինը, հաշվի առնելով Ս. Ղլեչյանի տարիքը եւ առողջական վիճակը, նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել է չհեռանալու մասին ստորագրությունը: Այդպիսով, հոկտեմբերի 27-ի գործով մեղադրյալները այսօրվա դրությամբ 19-ն են:**

Պրն Հարությունյանը հայտնեց նաեւ, որ Արաքիր եւ Քանաֆեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը բավարարել է ՆԳՆ աշխատակից Արթուր Հակոբյանի կալանքը եւս երկու ամսով՝ մինչեւ հուլիսի 8-ը երկարացնելու մասին զինդատախազության միջնորդությունը: Ա. Հակոբյանը, որը հոկտեմբերի 27-ին ԱԺ-ում հերթապահություն իրականացրած դասակի հրամանատարն է եղել, մեղադրվում է պաշտոնեական անփութության մեջ:

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻԿ

ՏԵՍԱԿԵՏ

Ո՞վ կլինի ՀՀ 10-րդ վարչապետն ու ո՞րն է նրա առաքելությունը

Այսօր ամենահրատապ հարցն է, թե ի՞նչ տրամաբանությամբ կձեւավորվի նոր կառավարությունը: Համենայն դեպս, ֆինանսատնտեսական շրջանակների տեսակետից, քաղաքական փոխզիջումներով, քաղաքական հենարան կամ քաղաքական «պատմուճան» ունեցող որեւէ վարչապետ, ով էլ լինի նա, Հայաստանի համար արդեն բացառվում է: Գոնե տեսականորեն անընդունելի է: Անցած 8 տարիները միանշանակ ապացուցեցին, որ ՀՀ վարչապետը ուղղակի չի կարող ներկայացնել որեւէ կոնկրետ քաղաքական կուսակցություն, ունենալ ընդհանրապես քաղաքական հենարան, ասում են նրանք: Նմանապես, անցյալ տարիների փորձն ու նախարարների «հերթափոխը» ապացուցեցին, որ վերջիններս չպետք է ներկայացնեն որեւէ կուսակցություն, այլ պետք է լինեն պարզապես պետական ծառայողներ: Վերջին փորձը՝ Արամ Սարգսյանի, այսպես կոչված, կոալիցիոն կառավարության, դրա ամենավառ ապացույցն էր: Մեր կողմից նշենք սակայն, որ անգամ մինչեւ հայտնի հրամանագիրը, արդեն իսկ տարբեր շրջանակներում (հատկապես՝ տնտեսական) շրջանառության մեջ էր դրվել նոր կառավարության անհրաժեշտության գաղափարը, կառավարություն, որն իր ղեկավարի հետ հանձն կառնի երկրի տնտեսությունը ճգնաժամից հանելու գործը, որը հանդես կգա իբրեւ մեկ միասնական թիմ՝ ձեւավորված զուտ տեխնոկրատ մարդկանցով, որն իր առջեւ կդնի տնտեսական արմատական փոփոխությունների հստակ ծրագիր, եւ որ ամենակարեւորն է՝ լարված սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական մթնոլորտում ընդունելի կլինի բոլորի կողմից: Կառավարություն, որին կվստահեն բոլորը, եւ որն իր վրա վերցնելով այս ամբողջ պատասխանատվությունները, պետք է խոսանա, որ իր առաքելությունը ավարտելուց, տնտեսությունը բնականոն ռելսերի վրա գցելուց հետո, ասենք, հինգ տարի հետո կհեռանա, բայց միայն հետագայում քաղաքական չդառնալու պայմանով:

Տեղեկացնենք, որ մոտավորապես այդպիսի մի փորձ արվեց Լեհաստանում, որը պսակվեց հաջողությամբ: Մեզ նման անցումային ճգնաժամի մեջ հայտնված այս երկրի տնտեսական զարգացման բեռը, վերոհիշյալ պայմաններով, հանձն առավ վերցնել այժմ արդեն Լեհաստանի տնտեսական ռեֆորմների ճարտարապետի անունը վաստակած Լեքեկ Բալցերովիչն իր տեխնոկրատների ուժեղ թիմով: Այդ հաջողված փորձն այժմ անվանվում է «Բալցերովիչի մոդել», եւ այդ մասին խոսակցություններն արդեն մի քանի ամիս շրջում են տարբեր, հատկապես ֆինանսատնտեսական շրջանակներում:



Որքանո՞վ է կիրառելի Բալցերովիչի մոդելը Հայաստանի համար

Ինչո՞ւ է այս մոդելը կիրառելի Հայաստանի համար: Նախ, անցած տարիների տնտեսական քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ այսօր արդեն Հայաստանը, ինչպես մի առիթով ասել էր ոչ անհայտ մի բիզնեսմեն, վերածվել է «հիվանդ էկոնոմիկայով մի նարկոմանի»: Ֆինանսական կազմակերպությունների ներարկումների ու թելադրանքների ազդեցության տակ ու նաեւ՝ փորձառաբար տարբեր ամերիկյան, ֆրանսիական «մոդելների» համար, որոնք այդպես էլ կիրառելի չեղան Հայաստանի համար: Լեհաստանի փորձը ընդունելի է Հայաստանի համար նախ այն պատճառով, որ այս երկիրն էլ զգնվում էր անցումային սոցիալիզմից կապիտալիզմի «քարքարոտ» ճանապարհին եւ, ամենակարեւորը՝ նկատի ունենալով լեհերի ու հայերի, որպես ազգ, մտածելակերպի ու հոգեբանության նմանությունները: Լեհերն էլ ավանդույթներ ունեցող, աշխատասեր եւ ի վերուստ առեւտրական ու գործարար ազգ են: Այս երկիրն էլ մինչեւ Բալցերովիչի կառավարությունն ու ծրագիրը ուներ գրեթե նույն խնդիրները: Իհարկե, Հայաստանում դրանք ավելի սրված են: այստեղ տնտեսությունը հայտնվել է, հատկապես վերջին վեց ամիսներին, գրեթե մեռյալ վիճակում կամ, ինչպես ասում են, նախակաթվածի փուլում, ներքին ու արտաքին ներդրումները այդ նույն Լեհաստանի համեմատ ուղղակի ծիծաղելիորեն ցածր մակարդակի վրա են, տնտեսական ցուցանիշները, անգամ մակրոտնտեսական, գնալով դառնում են ավելի մտահոգիչ, անգամ կայացած համակարգերը, զորօրինակ՝ բանկային, որից ստացված վերջին տվյալները լավատեսություն չեն ներշնչում, եւս հարցականի տակ են դրվել: Այդ նույն Բալցերովիչի մոդելով այսօր արդեն (վերջինս հիմա Լեհաստանի փոխվարչապետն է) Լեհաստանում գործում է բավական պարզ ու կոմպակտ կառավարություն: Այս երկրում ամբողջ տնտեսական բլոկը ղեկավարում է ընդամենը մի նախարարություն՝ էկոնոմիկայի, որին կից գործում են երեք գերատեսչություններ՝ արտահանման խթանման, մասնավոր սեկտորի աջակցման եւ ներդրումների խթանման, երեքն էլ հստակ ծրագրերով կիսակառավարական, ասել է թե ոչ բյուրոկրատական կառույցներ են: Ընդ որում, վերոհիշյալ մոդելի բանաձեւի պարզությունը հետեւյալն է՝ հստակ տարանջատում մասնավոր եւ պետական կառույցների եւ բացառում նրանց սերտաճումը, որի ամենաբացասական արդյունքը կոռուպցիան է, եւ որը, ցավոք սրտի, տիպական է դարձել Հայաստանի համար:

Իհարկե, այդ նույն շրջանակները, որոնք, ի դեպ, նաեւ գտնվում են հասարակության ճնշման ներքո, ունեն իրենց դիրքորոշումը: Ինչպես արդեն տեղեկացրել էինք, հենց ապրիլի 24-ին բողոքի մեծ ցույց անցկացնելը համայնքի պատասխանատուները հարմար չէին նկատել այն պարզ պատճառով, որ կսվերվեր Քրիստոսի ս. Հարության տոնի՝ բավականաչափ սպասված գույների ներքո: Դարասկզբին Թուրքիայի իրականացրած առաջին ցեղասպանության մասին ահազանգող ցուցադրությունից բացի, այս տարի էլ բազմաթիվ էին Թուրքիային պատասխանատվության դատապարտող՝ այս երկրի կողմից կատարվածը որպես ցեղասպանություն որակելու պահանջները, ինչպես նաեւ Գերմանահայոց կենտրոնական խորհրդի, թերեւս ամենասիրելի պատգամներից մեկը՝ Մոնթե Մելքոնյանի դիմանկարով: Մեկուկես ժամ Բեռլինի կենտրոնում կանգ է առել երթեւեկությունը, ավելի քան 200 ցուցարարներ ժամը 12-12:30 քայլելով անցել են Քուրֆյուրստենդամ փողոցով մինչեւ թուրքական դեսպանություն՝ ճանապարհին, բնականաբար, անցորդների ուշադրությունը գրավելով: Դեսպանությունից, ինչպես ենթադրվում էր նախորդ տարիների փորձից, որեւէ մեկը դուրս չի եկել, բայց անշուշտ շենքի ներսում տեղյակ էին կամ լսում էին ցուցարարների կողմից վանկարկվող «ոճրագործ Թուրքիա» արտահայտությունը, գերմաներեն, հայերեն ելույթները, հայրենասիրական երգերը: Անկասկած չէր թուրքական մամուլի ներկայությունը. սա շատերը բացատրում են նաեւ այն հանգամանքով, որ մեկ օր առաջ բեռլինյան «Թագեսցայտունգն» էր անդրադարձել Հայոց ցեղասպանությանը՝ տպագրելով Վոլֆգանգ Գուստի հոդվածը:

15:30-18:00 նախատեսված կլոր սեղանին մասնակցեցին Թեսա Հոֆմանը՝ «Ցեղասպանության ճանաչման ախտանիշները», ժիրայր Քոչարյանը՝ «Ի՞նչ նշանակություն ունի մեզ համար ապրիլյան եղեռնն այսօր» զեկույցներով, ինչպես նաեւ ԳԴՀ-ում ՀՀ դեսպան Ատոմ Ասկանյանը, Գերմանահայոց կենտրոնական խորհրդից՝ (ԳԿԽ) Անդրանիկ Ազնավուրը:

Ամեն տարի մեր համընդհանուր բողոքն ենք հայտնում, համախմբվում ենք, բայց ոչով որեւէ առաջխաղացում չեմ տեսնում, ի պատասխան մեր հարցի ասաց ԳԿԽ փոխատենապետ Ռաֆֆի Պեսիկյանը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

ՏՇՈՐՀՆԵՔ

Աստծո լույսը ձեր հարկից ներս

Տնօրինեմի արարողությունը մեծ խորհուրդ ունի ամեն մի քրիստոնյայի կյանքում: Եկեղեցական այդ կարգով օրհնվում են մեր տները՝ բոլորիս համար սրբազան ու թանկ ընտանեկան մեր հարկերը եւ ընտանիքի անդամները:

Տնօրինեմի արարողությունը հայտնի է դեռեւս առաքելական շրջանից: Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի առաքյալները, հետեւելով Վարդապետի օրինակին, աստվածհայտնության սուրբ ծննդյան եւ սուրբ հարության՝ զատկական տոներին, շրջում էին քրիստոնյաների տները՝ ավետելու Տիրոջ հրաշալուր ծննդյան եւ Նրա հրաշափառ հարության բարի լուրը: Այդպես էլ նրանց հետեւորդները՝ քահանաները, քրիստոնեական այս մեծագույն տոներին այցելում են իրենց համայնքների հավատացյալ զավակների տները եւ ավետիսը բերելով օջախից ներս՝ օրհնում նրանց եւ նրանց բնակարանները: Նախնի եկեղեցու ընդունված այս գեղեցիկ եւ հոգենորոգ սովորույթը ժամանակի ընթացքում ամրագրվեց որպես եկեղեցական կարգ՝ Տնօրինեմի արարողություն:

Կատարելով Տնօրինեմի կարգը, եկեղեցու սպասավորներն իրենց հայրական խոսքով մխիթարում, խրատում եւ հոգեւոր ուրախություն են հաղորդում իրենց եկեղեցու զավակներին: Արարողության ժամանակ քահանան օրհնում է տունը, այդ տան հացը, ջուրը, աղը եւ բնակիչներին, որպեսզի ամենախնամ եւ մարդասեր Բարձրյալը հովանավոր եւ աղավեն լինի նրանց, առաջնորդի բոլոր բարի գործերում:

Այսօր Հայ առաքելական եկեղեցու սպասավորը պատրաստ է անշահախնդրորեն մտնելու ձեր հարկից ներս, տալու Տիրոջ սքանչագործ հարության բարի ավետիսը, որպեսզի հարության լույսով նուրգվեն Ձեր հոգիները, լցվեն երկնառաք հույսով, սիրով, օրհնությամբ ու խաղաղությամբ:

Տ. ԴԱՆԻԵԼ ՔԱՀԱՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Երեւանի Սուրբ Հովհաննես եկեղեցու ծիսակատար քահանա

ՀՀ նախագահի հրամանագիրը ...

Սկիզբը էջ 1

- Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն անկախություն է հռչակել հանրաքվեով, 1991 թ.-ից փաստորեն անկախ է եւ Ադրբեջանի հետ որեւէ կապ չունի: Ի վերջո, այնտեղ երկու անգամ արդեն տեղի են ունեցել թե՛ նախագահական, թե՛ խորհրդարանական ընտրություններ: Արդեն ինը տարի անկախություն հռչակած պետությունում դա նորմալ, պարբերական գործընթաց է, որն այժմ շարունակվում է: Պետք է իրողությունները գնահատել սթափ ու իրատեսորեն, եւ կարծում եմ, սրա հետ պետք է որ արդեն համակերպված լինեին նաեւ Ադրբեջանում:

- Հայտարարության մեջ նշվում էր նաեւ, որ այդ ընտրություններն, անկասկած, բացասական ազդեցություն կունենան ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի վրա:

- Կարծում եմ, որ ընտրությունների անցկացումը հակամարտության խաղաղ կարգավորման համար կունենա ոչ թե բացասական, այլ դրական նշանակություն, որովհետեւ, ըստ էության, օրինաբար ընտրված իշխանությունն անհրաժեշտ է նաեւ հակամարտության լուծման համար: Անհրաժեշտ է ժողովրդի կողմից ընտրված, նրա լայն աջակցությունը վայելող իշխանություն, որի դեպքում էլ երաշխիքներ կլինեն, որ հակամարտության կարգավորման վերաբերյալ ընդունված որոշումները կիրագործվեն: Պատահական չէ, որ ԼՂ հակամարտության կարգավորման համար ԵԱՀԿ-ում ստեղծված Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցություններին կանոնավոր կերպով Հայաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչների հետ մասնակցել են ԼՂՀ իշխանության ներկայացուցիչները:

- Վերջերս մամուլում հրապարակվեցին տեղեկություններ, որ իբր Ադրբեջանի իշխանությունները մտադիր են ԼՂՀ Շահումյանի շրջանում վերաբնակեցնել չեչեն գաղթականների: Ինչպիսի՞ն է ՀՀ իշխանությունների վերաբերմունքը:

- Նախ տեղեկությունը ճշված եւ հետեւաբար հավաստի չէ, բացի այդ, չենք կարծում, որ կհամապատասխանի իրականությանը:

Ուղղում

Մայիսի 3-ի «Նոր 10-րդ վարչապետի սպասումները խորհրդարանում» հոդվածում տպագրական վրիպակ է սպրդել. **«ՀԺԿ նախագահը** հավաստել է, որ պատգամավորության նախարար Վաղարշակ Հարությունյանը...» տողում պետք է կարդալ **ՀՀ նախագահը**:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 9 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ՇԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բեռլինի կենտրոնում կանգ առավ երթեւեկությունը

2000 թ. ապրիլի 29-ին գերմանահայությունն առաջին «ապրիլխանչորյան» ցույցը գումարեց Բեռլինում: (Ինչպես արդեն տեղեկացրել էինք, հենց ապրիլի 24-ին բողոքի մեծ ցույց անցկացնելը համայնքի պատասխանատուները հարմար չէին նկատել այն պարզ պատճառով, որ կսվերվեր Քրիստոսի ս. Հարության տոնի՝ բավականաչափ սպասված գույների ներքո): Դարասկզբին Թուրքիայի իրականացրած առաջին ցեղասպանության մասին ահազանգող ցուցադրությունից բացի, այս տարի էլ բազմաթիվ էին Թուրքիային պատասխանատվության դատապարտող՝ այս երկրի կողմից կատարվածը որպես ցեղասպանություն որակելու պահանջները, ինչպես նաեւ Գերմանահայոց կենտրոնական խորհրդի, թերեւս ամենասիրելի պատգամներից մեկը՝ Մոնթե Մելքոնյանի դիմանկարով: Մեկուկես ժամ Բեռլինի կենտրոնում կանգ է առել երթեւեկությունը, ավելի քան 200 ցուցարարներ ժամը 12-12:30 քայլելով անցել են Քուրֆյուրստենդամ փողոցով մինչեւ թուրքական դեսպանություն՝ ճանապարհին, բնականաբար, անցորդների ուշադրությունը գրավելով: Դեսպանությունից, ինչպես ենթադրվում էր նախորդ տարիների փորձից, որեւէ մեկը դուրս չի եկել, բայց անշուշտ շենքի ներսում տեղյակ էին կամ լսում էին ցուցարարների կողմից վանկարկվող «ոճրագործ Թուրքիա» արտահայտությունը, գերմաներեն, հայերեն ելույթները, հայրենասիրական երգերը: Անկասկած չէր թուրքական մամուլի ներկայությունը. սա շատերը բացատրում են նաեւ այն հանգամանքով, որ մեկ օր առաջ բեռլինյան «Թագեսցայտունգն» էր անդրադարձել Հայոց ցեղասպանությանը՝ տպագրելով Վոլֆգանգ Գուստի հոդվածը:

15:30-18:00 նախատեսված կլոր սեղանին մասնակցեցին Թեսա Հոֆմանը՝ «Ցեղասպանության ճանաչման ախտանիշները», ժիրայր Քոչարյանը՝ «Ի՞նչ նշանակություն ունի մեզ համար ապրիլյան եղեռնն այսօր» զեկույցներով, ինչպես նաեւ ԳԴՀ-ում ՀՀ դեսպան Ատոմ Ասկանյանը, Գերմանահայոց կենտրոնական խորհրդից՝ (ԳԿԽ) Անդրանիկ Ազնավուրը:

Ամեն տարի մեր համընդհանուր բողոքն ենք հայտնում, համախմբվում ենք, բայց ոչով որեւէ առաջխաղացում չեմ տեսնում, ի պատասխան մեր հարցի ասաց ԳԿԽ փոխատենապետ Ռաֆֆի Պեսիկյանը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

ԱԶԳ

Կարծիքներ

«Ձեռնոցի պես փոխվում են կառավարությունները, եւ ոչ ոք պատասխանատվություն չի կրում»

ԱԺ խումբ-խմբակցությունները գնահատում են եւ կանխատեսում

«Վարչապետի պաշտոնանկությունից հետո, ըստ գործող օրենքի, բոլոր նախարարները պաշտոնաթող են: Երեկ հանրապետության նախագահը հանդիպեց կառավարության անդամներին եւ բոլորին խնդրեց կատարել իրենց պարտականությունները մինչեւ նոր վարչապետի նշանակումը: Ես չեմ գտնում, որ ամեն նոր վարչապետ պետք է լիովին փոխի կառավարության կազմը, պետք է ծրագրերի, գործունեության շարունակականություն լինի, այլապես ամեն մեկը գալու եւ գոյից է սկսելու, իսկ խնդիրը նախագահի լիազորությունների շրջանակում է», երեկ ԱԺ-ին պարզաբանեց արտադրական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախագահ Վահան Շիրխանյանն՝ ի պատասխան «Միասնության» անդամ Վազգեն Խաչիկյանի՝ ինչո՞ւ վարչապետի հեռանալուց հետո նախարարները հրաժարական չեն տալիս եւ ամբողջ կազմով ներկայացել են ԱԺ հարցուպատասխանի:

Խաչատրյանը փաստեց, որ այսօր Հայաստանի իշխանական համակարգում ցավոք չկա մեկը, որի շուրջ կարող է համախմբվել հասարակությունը եւ քաղաքական դաշտը, ուստի կա դեստրուկտիվ գործողությունների վտանգ:

ԱԺ փոխխոսնակ Տիգրան Թորոսյանը հակիրճ էր՝ նա դրական գնահատեց Արամ Սարգսյանի 6-ամսյա վարչապետության շրջանը՝ ընդգծելով, որ նրա առջեւ դրված էր քաղաքական խնդիր, որն էլ իրագործվեց: Մանրամասնություններ հայտնելուց ձեռնպահ մնաց, քանի դեռ նորից չեն հանդիպել հանրապետության նախագահին: Միաժամանակ Տիգրան Թորոսյանը հայտնեց, որ իրենք նախապատրաստում են քաղաքական հայտարարություն «Միասնության» անունից, ուր արդեն վերջնական գնահատական կտրվի վարչապետի պաշտոնանկությանը եւ դրա հետագա զարգացումներին:

ՀՀԿ խորհրդի անդամ Գալուստ Սահակյանն **«Ազգին»** մասնավորեց. «Վարչապետի թեկնածության քննարկումներ համալրվեց եւս մեկ պատգամավորով (Հակոբ Հակոբյան Գեղարքունիքի) ի պատասխան **«Ազգի»** հայտնեց. «Նախագահը պետք է հաշվի առնի ԱԺ-ում քաղաքական ուժերի դասավորությունը, հակառակ դեպքում նոր կառավարությանը սպասում է նույն ճակատագիրը, ինչ նախորդին: Քաղաքական ուժերն են հաստատում կառավարության ծրագրերը եւ նրա բերած օրենքի նախագծերը, եթե ԱԺ-ն դրանց համամիտ չեղավ, ապա այդ կառավարությունը չի աշխատի: Եթե «Միասնությունը» ԱԺ քաղաքական դաշտում մեծամասնություն է, ապա նախագահը պետք է հիմնվի նրանց վրա, բայց «Միասնությունը» պետք է դա հաստատեցնի իր ներսում, այլապես ինչ է ստացվում: Խմբակցության կեսը կողմ է քվեարկում տարբեր նախագծերի, կեսը դեմ: Ի՞նչ է «Միասնությունը» դե յուրե գոյություն ունի, դե ֆակտո չկա՞»: **«Ազգի»** այն հարցադրմանը, թե գուցե հոկտեմբերի 27-ից հետո ԱԺ-ում քաղաքական մեծամասնություն արդեն չկա, նա սա-

ՍՊՈՒՏՆԻԿ

մենք դեռեւս չենք կատարել, եթե «Միասնություն» դաշինքը համաձայնեց, ինչպես նշված է հանրապետության նախագահի հայտարարության մեջ, նոր վարչապետի շուրջ խորհրդակցություններ, ապա ես կարող եմ հայտնել իմ կարծիքը: Վարչապետը պետք է լինի Հանրապետական կուսակցության անդամ»: Գալուստ Սահակյանը չժխտեց, որ երեքշաբթի «Երկրապահի» հետ քննարկումները բավականաչափ լարված են ընթացել, բայց իրենք կողմնակից են միայն սահմանադրական լուծումների անգամ կամուրջներ այրելու, բայց ոչ հակասահմանադրական եղանակներով: Նա առաջարկեց չնայնացնել երկրապահներին հրացանավոր մարդկանց հետ: Միաժամանակ Գալուստ Սահակյանն անկեղծ էր ՀՀԿ-ՀԺԿ միասնությունը կարող է սասանվել, քանզի առկա է կատարվածի գնահատականների որոշ տարբերություն: Հանրապետականը վստահ է, որ ինքը ունի վարչապետի եւ կառավարության անդամների արժանի թեկնածուներ:

ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանը նախագահի հետ պաշտոնական քննարկումներից առաջ խուսափեց ծավալուն գնահատականներից, միայն ասաց. «Կառավարության փոփոխության մասին շատ է խոսվել, բայց ամբողջ խնդիրն այն է, թե ինչպիսի կառավարություն պետք է ձեւավորվի: Միայն այդ սկզբունքի հայտնի դառնալուց հետո ճիշտ կլինի եզրակացություններ կատարելը»: «Օրինաց երկիր» խմբակցության ղեկավար Արթուր Բաղդասարյանը գրեթե համակարծիք էր. «Տխուր իրավիճակ է: Այսպիսի լուծման մասին կառավարությունը փոփոխելու, նոր կառավարություն կազմելու, շատ է խոսվել, բայց կատարվածը չենք կարող համարել հարցի վերջնական լուծում»:

«Կայունություն» խմբի ղեկավար Վարդան Այվազյանը (այս խումբը երեկ համալրվեց եւս մեկ պատգամավորով Հակոբ Հակոբյան Գեղարքունիքի) ի պատասխան **«Ազգի»** հայտնեց. «Նախագահը պետք է հաշվի առնի ԱԺ-ում քաղաքական ուժերի դասավորությունը, հակառակ դեպքում նոր կառավարությանը սպասում է նույն ճակատագիրը, ինչ նախորդին: Քաղաքական ուժերն են հաստատում կառավարության ծրագրերը եւ նրա բերած օրենքի նախագծերը, եթե ԱԺ-ն դրանց համամիտ չեղավ, ապա այդ կառավարությունը չի աշխատի: Եթե «Միասնությունը» ԱԺ քաղաքական դաշտում մեծամասնություն է, ապա նախագահը պետք է հիմնվի նրանց վրա, բայց «Միասնությունը» պետք է դա հաստատեցնի իր ներսում, այլապես ինչ է ստացվում: Խմբակցության կեսը կողմ է քվեարկում տարբեր նախագծերի, կեսը դեմ: Ի՞նչ է «Միասնությունը» դե յուրե գոյություն ունի, դե ֆակտո չկա՞»: **«Ազգի»** այն հարցադրմանը, թե գուցե հոկտեմբերի 27-ից հետո ԱԺ-ում քաղաքական մեծամասնություն արդեն չկա, նա սա-

Արամ Սարգսյանի կառավարության հետ խորհրդարանի հանդիպումը սառը զգուշավոր էր: Եվ միայն Արշակ Սադոյանն էր, որ հետեւողական շարունակեց հետաքրքրվել՝ ինչո՞ւ ձեռնոցի պես փոխվում են կառավարությունները, եւ ոչ ոք պատասխանատվություն չի կրում անցածի համար:

Կամուրջներ այրելու եւ պահպանելու կողմնակիցները

«Ազգը» դիմեց ԱԺ քաղաքական ուժերի ներկայացուցիչներին, որոնց հետ այսօր իր բանակցություններն է սկսելու հանրապետության նախագահը՝ 10-րդ վարչապետին նշանակելու եւ նոր կառավարություն կազմավորելու նպատակով: ՀՅԴ խմբակցության անդամ, ԳՄ ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը միանշանակ էր. «Հանրապետության նախագահի վերջին հրամանագրերը եւ քայլերը դրական եմ գնահատում: Հայաստանում անհրաժեշտ է իշխանության կենտրոնացում, գործադիր իշխանության մեջ երկու բուրգերի առկայությունը հանգեցնում է առճակատման: Այսպիսով, իրավիճակը լիցքաթափվեց»: Անդրադառնալով Արամ Սարգսյանի 6-ամսյա պաշտոնավարությանը, Արմեն Ռուստամյանը, հետեւելով նախագահի օրինակին, դրական գնահատեց վերջինիս նեղությունը՝ հանդգնած, որ Արամ Սարգսյանը կատարեց իր առջեւ դրված քաղաքական խնդիրը՝ լիցքաթափեց իրավիճակը:

«Իրավունք եւ միաբանություն» խմբակցության անդամ, ՍԻՄ նախագահ Հրանտ Խաչատրյանը վերլուծեց. «Հանրապետության նախագահը Արամ Սարգսյանի նշանակման օրվանից մտածում էր ինչպե՞ս ազատվել նրանից: Այս դեպքում մենք մի քանի ամիս կորցրինք նախագահի այդ ծրագիրն իրագործելու համար: Արամ Սարգսյանը կոմպրոմիսային ֆիգուր էր եւ քայլեր էր կատարում՝ որպես վարչապետ իր դերն իրագործելու համար: Մենք փորձեցինք աջակցել նրան, բայց այստեղ էլ վարչապետը կորցրեց բացթողումներ կատարեց: Դադարեցրեց սեփական նախաձեռնությունը: Ճիշտ է, Ռոբերտ Քոչարյանն էլ չաջակցեց նրան՝ ընդամենը մեկ քայլ կատարեց. Մանվել Գրիգորյանին եւ Սեյրան Սարոյանին պաշտոններ տվեց, որից հետո վարչապետը դադարեցրեց համագործակցությունը կուսակցությունների հետ, եւ տպավորություն ստեղծվեց, թե նա լրիվ չի տիրապետում քաղաքական դաշտին: Այդ նշանակումները չպետք է խանգարեին նրան շարունակելու ծրագիրը: Բայց նա դադարեցրեց համագործակցությունը եւ հայտնվեց հարաբերությունների մեջ, որի արդյունքն այսօր տեսնում ենք»: Հրանտ

ԳԵՂԱՀԱՐՈՒՅՑՆԵՐ

Վերջ երկփեղկվածությանը գործադիր իշխանության ներսում

Նախագահի քայլը գնահատում են ոչ խորհրդարանական ուժերը

Ռոբերտ Քոչարյանի՝ Գյումրիում արած հայտարարությունը, թե ինքը ներքաղաքական ճգնաժամային վիճակը շտկելու վճռական քայլեր է ձեռնարկելու, հաշված օրերի ընթացքում փաստորեն կյանքի կոչվեց վարչապետի պաշտոնանկության հրամանագրով: 20 օրվա ընթացքում նա ՀՀ 10-րդ վարչապետի իր թեկնածուին, նոր կառավարության կազմը պիտի ներկայացնի ԱԺ-ի դահլիճ: Երեկ նախագահը հանդիպել է կառավարության անդամների հետ՝ նշելով, թե ինքը հակված չէ կառավարության անդամների հաճախակի փոփոխություններին, այնպես որ նախարարներից շատերը կշարունակեն աշխատել նոր կառավարության կազմում: Նախագահը երեկ հանդիպել է նաեւ մարզպետների հետ եւ նախատեսում է քննարկումներ նաեւ խորհրդարանական քաղաքական ուժերի հետ՝ նախ եւ առաջ մեծամասնության: Իսկ որպիսի՞ գնահատականներ, կանխատեսումներ ունեն վարչապետի պաշտոնանկության վերաբերյալ ԱԺ-ում չներկայացված քաղաքական կուսակցությունները: Կարեւորն այսօր իշխանության գործադիր թեւի երկփեղկվածության վտանգավոր երեւույթի վերացումն էր: Մեզ միասնական թիմ է հարկավոր՝ հատկապես երկրիս տնտեսական ճգնաժամային վիճակը նկատի առնելով: Այնպես որ, այս քայլի անխուսափելիությունը փաստ է: Հուսանք, որ հաջորդող քայլերն էլ միտված կլինեն կայունությանն ու այս վիճակից դուրս գալուն: Այլապես մենք կորցնելու ենք պետականությունը: Այս պահին վարչապետի պաշտոնում պետք է մարդ, որ կարողանա ճիշտ գնահատել եղած վիճակն ու աշխատել:

Շատ դեպքերում կան անհրաժեշտ մարդիկ, սվերում, պարզապես մենք սովոր ենք մշտական, հայտնի անունների թվարկմանը: Բայց հիմա ոչ ժամանակ ունենք, ոչ էլ միջոցներ, հարուստություն, որ թույլ տանք մեզ մի էքսպերիմենտ էլ անել:

Նոր կառավարությունն ընդամենը կատարող է լինելու

ՆԵՐՍԵՍ ՉԵՅՆԱԼՎԱՆԴՅԱՆ
ԻՄ նախագահ

Վերջին հրամանագրով նախագահն ընդամենն օգտվել է իր սահմանադրական իրավունքից: Մենք անընդհատ հայտնվում ենք ճգնաժամային իրավիճակներում, գնահատականներ տալիս, ելքեր որոնում: Ամենակարեւորը ճիշտ հետեւություն անելն է: Իսկ հետեւությունը մեկն է: Վերջին տարիների բոլոր նման իրավիճակների պատճառը հիմնականում մեր անկատար Սահմանադրությունն է: Բայց վերջինիս համաձայն էլ գործող նախագահն է գործադիր իշխանության պատասխանատուն: Այս առումով անբնական վիճակ էր ստեղծվել: Ի՞նչ է նշանակում հակասություններ գործադիր իշխանության մեջ: ՀՀ Սահմանադրությունը տարանջատում է իշխանության երեք թեւ, մենք ունենք նաեւ չորրորդը՝ վարչապետ, կառավարություն: Փաստ Աստծո, քայլն արված է եւ այսուհետ գործադիր իշխանության մեկ թեւ կա, մեկ պատասխանատու: Սա բնական է:

Ինչ վերաբերում է նրան, թե ինչպես կզարգանան իրադարձություններն այսուհետ, արդյոք ԱԺ-ն կամ պիտի հաստատի նոր կառավարության կազմն ու փորձի աշխատել այդ կառավարության հետ՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգով, կամ էլ պիտի մերժի: Վերջին դեպքում նախագահին այլ բան չի մնա անելու, քան, դարձյալ սահմանադրական իր իրավասությունների շրջանակում, գրել ԱԺ-ն: Կարծում եմ, խորհրդարանն, այնուամենայնիվ, կհաստատի նոր կառավարության կազմն ու կաշխատի նրա հետ: Իսկ նոր կառավարությունը պիտի լինի կատարող, Ռ. Քոչարյանի ծրագրերն իրականացնող:

Սովորական, աշխատանքային մի քայլ էր

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ *(«Հզոր Հայրենիք» կուսակցության նախագահ)*

Ցանկացած քայլ, որ տեղի է ունենում Սահմանադրության շրջանակներում, սովորական, աշխատանքային երեւույթ է: Նախագահի հայտնի հրա-

«Ի վերջո, պիտի ունենա՞նք միասնական ու սկզբունքային...»

Սկիզբը էջ 1

«Միասնությունն» այսօր գաղափարաքաղաքական որեւէ սկզբունքից զուրկ զանգված է: Մենք բոլորս էլ կարող էինք շարունակել «հետաքրքրությամբ» դիտել մինչ այս շաբաթ ծավալվող ներկայացումը, եթե երկրի ու բոլորիս վիճակն այսքան ծանր չլիներ: Սարսափելի անհամաչափություն է ժողովրդի իրական վիճակի ու «վերեւներում» կատարվող անցուդարձերի միջեւ... Սա գիտակցելով՝ նախագահի հրամանագրերը միմիայն դրական ենք գնահատում:

– Պրն Միրզախանյան, անդրադառնանք վարչապետի նոր տպավորող թեկնածությանը: Ո՞ւմ նշանակումը լավագույնս կհամապատասխանի իրավիճակին, ո՞վ կկարողանա ըստ արժանվույն սանձնել այդ պարտավորությունը:

– Չեմ ուզում մամուլի օրինակին հետեւելով գուշակություն անել, քանի որ կարեւորն, ըստ իս, վարչապետի անձը չէ: Կարեւորն այն է, որ նորանշանակ վարչապետն, ով էլ լինի, միասնաբար հանդես գա նախագահի հետ: Ինչ վերաբերում է ՀՌԱԿ-ի դիրքորոշմանը, ապա կարծում ենք (եւ սա թույլ է տրված նաեւ մեր Սահմանադրությամբ), որ ճիշտ կլիներ, եթե մինչ նոր կառավարության ձեւավորումը նախագահն ինքը սանձներ վարչապետի պարտավորությունները եւս: Ի վերջո, այդ քայլով նա ի ցույց կդներ իր ամբողջական պատասխանատվությունը նաեւ երկրի տնտեսության ապագայի համար:

Իսկ այն հարցին, թե ինչպիսի վարչապետ է մեզ այսօր պետք, կարող ենք միանշանակ պատասխանել՝ նախորդների դառը փորձը հաշվի առնելով, մեզ անհրաժեշտ է վարչապետ, որը չի լինի աղգաղաղափարական դեմք, կունենա ծրագրային հստակ մոտեցումներ: Ի վերջո, մենք պիտի տնտեսական զարգացման մի գիծ ընտրենք մեզ համար եւ առաջնորդվենք այդ գծով: Հեռանկարային չեմ համարում տեխնոկրատ կառավարություն ունենալու տարբերակը: Իրոք, կառավարության գործողություններում պիտի լինի սկզբունք, եւ կադրերի ընտրությունը պիտի համապատասխանեցվի այդ սկզբունքին: Արդեն բազմիցս համոզվել ենք, որ ընկերական չափանիշները պետական գործերում ոչինչ չարժեն. անհրաժեշտ է բոլորվին այլ բնույթի միասնություն, միասնական համակարգ:

բանավեճ

Խոսովանում եմ՝ Ա. Մայիլյանի հոդվածը (թեեւ բանավիճային) ինձ վրա թողեց խսմնելի տպավորություն, բայց ոչ այն պատճառով, որ քաղաքական տեսակետից աբսուրդ պնդումների եւ անգրագետ հետեւանքների մի շարան էր, այլ այն պատճառով, որ չափազանց վիրավորական, հոխորտ ոճով այս հոդվածում մարտահրավերի ձեռնոց էր նետվում մի ամբողջ ժողովրդին եւ նրա առավել գիտակից մասին. ինչպիսի՞ հանդգնություն հայ ժողովրդի եւ նրա մտավորականության կողմից, որ համարձակվել են ընտրել իրենց պատմական ուղին... Եթե լինենք հակիրճ, ապա կարելի է պնդել՝ հոդվածի լեյտմոտիվը երկուսն է.

1. Թունոտ ատելություն ամեն մի ռուսականի նկատմամբ:

2. Ոչ պակաս ատելություն կոմունիստական գաղափարախոսության նկատմամբ, իսկ ի՛նչ ավելի խորանալու դեպքում՝ սեր եւ կարոտ արեւմտյան եւ, ինչու ոչ, նաեւ իսլամական արժեքների նկատմամբ:

Դարեր ի վեր իր պետականությունը կորցնելուց հետո հայ ժողովուրդը (գուցեեւ ցեղատեսակը) Արեւելյան Հայաստանի տարածքում գոյատեւել է՝ միավորվելով առանձին մելիքությունների, իշխանությունների մեջ, որոնք գտնվում էին Պարսկաստանից վասալական կախվածության մեջ: Ինչ վերաբերում է արեւմտահայերի կարգավիճակին՝ մեկնաբանությունների կարիք չունի: Կարո՞ղ էր արդյոք հայ ժողովուրդը միավորվել եւ առանց արտաքին օժանդակության ազատվել վասալական վիճակից եւ ստեղծել անկախ պետականություն: Ոչ: Ի՞նչ տեղի կունենար հետագայում հայ ցեղատեսակի հետ, եթե 1828 թ. Ռուսաստանը իր տարածքներին չմիացներ Արեւելյան Հայաստանի տարածքները, ոչ մի «զարմանալի» բան: Համարյա մեկին հավասար հավանականությամբ կարելի է պնդել, որ ամբողջ հայ ժողովրդի հետ տեղի կունենար այն, ինչ տեղի ունեցավ 1915 թ. արեւմտահայերի հետ:

Այսպիսով, մենք «սխալված ենք» արձանագրել այն փաստը, որ 1828 թ. Արեւելահայաստանի տարածքները Ռուսական կայսրության տարածքներին միացնելը փրկեց հայ ժողովրդին ոչնչացումից: Այս պարագայում ի՞նչ պետք է ասեր «խեղճ ու կրակ» հայ մտավորականը՝ անիծե՞ր, թե՞ օրհներ «էն սհաթը, երբ ռսի օրհնած ոսը հայոց լիս աշխարհը մտավ...»:

Հարգելի ընթերցող, մի զարմացիր, եթե մեջբերեմ որոշ մարդկանց կարծիքը, որ գուցե պարսկահպատակ (կամ թուրահպատակ) մնալու դեպքում հայ ժողովուրդը կարող էր ակնկալել ավելի երջանիկ ապագա: 1915 թ. դեպքերը արդեն անհիմաս են դարձնում այս հարցադրումը: Բայց դեպքերին նայենք ելնելով այն ժամանակվա իրավիճակից: Ինչու՞ Ռուսաստանին միանալը օպտիմալ, եթե ոչ միակ հնարավոր տարբերակն էր:

1. Ռուսաստանը ավելի զարգացած եւ քաղաքակիրթ երկիր էր:

2. Ռուսաստանը հիմնականում քրիստոնյա տերություն էր:

3. Ռուսաստանը անհրաժեշտություն չուներ կազմակերպելու հայ ժողովրդի ցեղասպանություն. այդպիսի մոտիվներ չկային:

Պատմությունը ցույց է տվել, որ ռուս ժողովուրդը (եւ կառավարությունը) երբեք իր տարածքում ապրող ժողովուրդներին, առավել եւս բնաջնջման սպառնալիքով, բռնի ձուլման չի ենթարկել: Ապացույցն է այն պատմական փաստը, որ «Ռուսական կայսրության» տարածքում գոյություն են ունեցել նույնիսկ «անկախ» ազգային միավորումներ: Վերջինս համարյա աննախադեպ երեւույթ է պատմության մեջ. նման այլ դեպք գոյություն չունի:

Եվ, որպեսզի գնահատենք Ռուսաստանի հետ մեր բարեկամության (կամ հպատակության) արդյունքները, ձեւակերպենք մի ակնհայտ փաստ՝ ախտոմ... որտեղով անցել է թուրքը, այնտեղ այլեւս հայ չկա, որտեղով անցել է ռուսը, այնտեղ ոչ միայն հայ կա, այլեւ՝ հայկական

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ

... Հայ ժողովուրդը մեղադրվում է... Սասնապոր մեղադրող՝ Արամ Մայիլյան

Մարտի 10-ի համարում «Ազգը» բանավիճային կարգով լույս էր ընծայել Արամ Մայիլյանի «Ահա Կովկասն իմ ոտքի տակ» հոդվածը. գրված խիստ ոճով՝ ռուսական կայսերապաշտական ձգտումների դեմ: Ի պատասխան, մեր թերթն արդեն մարտի 23-ին հրապարակել է ակադեմիկոս Լեւոն Հախվերդյանի «Բանը, որ չգիտեմ, ինչո՞ւ եմ գրում, պարոն Արամ Մայիլյան» վերնագրով հոդվածը: Այսօր լույս ենք ընծայում մեկ այլ հոդված՝ այս անգամ գրված խիստ կոմունիստական եւ խիստ ռուսամետ դիրքերից: Ինչպես խոստացել ենք, առաջիկայում կհրապարակենք մեր տեսակետները:

պետականություն...

Ինչպիսին, պարունակենք պատմությունը: Հաջորդ պատմական էտապը ռուսական հեղափոխությունը եւ նրա հետեւանքներն են:

1. Հավանաբար, եթե Հոկտեմբերյան հեղափոխությունը տեղի չունենար, ապա Անտանտի փաստացի հաղթանակը կբերեր Օսմանյան կայսրության լիակատար անկման եւ, հավանաբար, Արեւմտյան Հայաստանի միացմանը Ռուսաստանին: Ես ասում եմ «հավանաբար», որովհետեւ Անտանտի մյուս անդամները, ինչպես ցույց է տվել պատմությունը, Ռուսաստանի հետ դաշնակից լինելուց անմիջապես կվերածվեին նրա ոխերիմ թշնամիների եւ ամեն ինչ կանեին, որպեսզի Հայաստանը՝ թեկուզ հայ ազգի կործանման գնով, չմիանար Ռուսաստանին:

2. Բոլշեւիկյան կառավարությունը՝ ա) Թուրքիային զիջեց մի քանի հայկական գավառներ, բ) ստեղծեց Հայաստանի Հանրապետությունը. վերջապես երկար դարերից հետո հայ ժողովուրդը նորից ձեռք բերեց պետականություն:

Ի պատիվ բոլշեւիկների՝ ասենք, որ պետականություն ստացան այնպիսի ժողովուրդներ, որոնք երբեւիցե պետականություն չէին ունեցել:

Չնայած բոլոր «անարդարություններին» ՀԽՍՀ-ի ստեղծումը պատմական մեծ իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում: Պատմական համեմատաբար կարճ ժամանակահատվածում Հայաստանը դարձավ տվյալ տարածքում ամենազարգացած, տնտեսապես հզոր, բարձր գիտական եւ ինտելեկտուալ պոտենցիալ ունեցող, քաղաքակիրթ պետություն: Վերջապես հայ ազգանուններն արտասանվեցին համաշխարհային բոլոր ասպարեզներում՝ սկսած սպորտից, վերջացրած գիտությամբ:

Չտեսնել, չգնահատել այս ամենը՝ նշանակում է կույր լինել:

Իսկ ինչպե՞ս կդասավորվեր հայ ժողովրդի ճակատագիրը, եթե Հոկտեմբերյան հեղափոխությունը չկայանար: Ամենահավանական ելքը կլիներ էվոլյուցիոն ճանապարհով ազգի ասիմիլյացիան, որը կարագանար հատկապես Ռուսաստանում կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց. կապիտալը ազգ եւ ազգային արժեքներ չի ճանաչում:

Պատմական հաջորդ կարեւոր ժամանակաշրջանը վերակառուցման եւ վերաբաժանման ժամանակաշրջանն է: Համաշխարհային կապիտալը (հավանական հասկացություն է) նպատակ էր դրել կործանելու՝

1. Սոցիալիստական ճամբարը,

2. Խորհրդային Միությունը,

3. Ռուսաստանյան Դաշնությունը:

Նպատակը՝ ազատվել համաշխարհային ասպարեզում մի ուժեղ, հզոր մրցակցից, բացել ռուսական եւ մյուս շուկաների դռները իր առջեւ, ձեռք բերել էժան հումքի եւ աշխատուժի համարյա անսպառ շտեմարան՝ գերշահույթներ ստանալու եւ հարստանալու նպատակով:

Մոտ 30-ամյա դիվերսիոն գործունեությունից հետո համաշխարհային կապիտալը իր վարձկանների՝ «դեմոկրատների» եւ «ռեֆորմատորների» ձեռքով, դասական ոճով, հասավ իր նպատակներին: Բելովեժյան պայմանագիրը նախկին միութենական հանրապետություններին նվիրեց անկախություն եւ ինքնավարություն:

Երբ անցավ համազգային խանդավառությունը, հայ ժողովուրդը եւ կառավարությունը հասկացան, որ ստեղծված պատմական իրադրությունը ստիպում է եւս մեկ անգամ ընտրել դաշնակից: Եվ ժողովուրդը կատարեց իր ընտրությունը: Ինչպե՞ս եւ ինչո՞ւ:

Հայաստանն, իրոք, Ռուսաստանի համար ստրատեգիական նշանակություն ունեցող երկիր է: Դա նշանակում է, որ Հայաստանը դեռ շատ երկար ժամանակ կարող է ակնկալել Ռուսաստանի օգնությունը: Իսկ Արեւմուտքի համար Հայաստանը ունի զուտ տակտիկական նշանակություն: Քանի դեռ համաշխարհային կապիտալը լրիվ չի կործանել ռուսական «կայսրությունը», Հայաստանը կարող է ակնկալել որոշ օգնություն (ցավալի է՝ միայն մուրացկանի կարգավիճակով) Արեւմուտքից: Բայց բավական է, որ ռուսական կայսրությունը լիովին կործանվի, Հայաստանը Արեւմուտքի համար կդառնա ավելորդ բալաստ, գլխացավանք, եւ վերջինս հաճույքով կտրամադրի Հայաստանին Թուրքիայի եւ Ադրբեջանի հոշոտմանը:

Կարող է լավագույն դեպքում կրկնվել եւս մի բալկանյան սցենար:

Իսկ ինչո՞ւ այսպիսի մռայլ վերջաբան:

Անհրաժեշտ է հստակ պատկերացնել պարտատեր եւ պարտապան կողմերի հարաբերության ներքին տրամաբանությունը: Գաղտնիք չէ, որ այսօր ամեն մի հայ երազում է վերադարձնել պատմական հայկական տարածքները եւ, երեւի, ոչ ավելին: Իր հերթին Թուրքիան շահագրգռված է հայ ազգի իսպառ կործանման մեջ. հայկական «փուչը» մնացել է նրա կոկորդին, եւ նա կօգտվի առաջին իսկ հնարավորությունից՝ ազատվելու այդ փշից:

Ե՞րբ կարող է ստեղծվել այդպիսի հնարավորություն:

Պրն Մայիլյանը առաջարկում է իր ծրագիրը՝ հեռացնել ռուսական սահմանապահ զորքը, ռուսներին վերադարձնել նրանց տված զենքը եւ սկսել կոկետություն անել Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ: Գուցե ռուսական «գրկի» փոխարեն նետվենք Թուրքիայի «գի՞րկը»:

Պարզվում է, որ Հայաստանի համարյա բոլոր լուրջ քաղաքական-հասարակական կազմակերպությունները (թվարկումը՝ Ա. Մայիլյանի հոդվածում) կողմ են հայ-ռուսական բարձր մակարդակի համագործակցությանը: Ի՞նչ ամոթալի, ցավալի, խայտառակ փաստ: Ինչպիսի՞ հանդգնություն եւ այ ժողովրդի կողմից, որը համարյա միաձայն արտահայտվել է հօգուտ Ռուսաստան-Բելոռուսիա-Հայաստան միության ստեղծմանը՝ առանց հարցնելու Մայիլյանի կարծիքը: Դեմոկրատիայի նոր մեկնաբանում:

Իհարկե, «...Արեւմուտքը (երեւի ժամանակավոր՝ իմ մեջբերումը) մոռանակավոր՝ իմ մեջբերումը) մոռացել էր այն ակնկալիքները, որ ուներ այն ազգը, որ հայ ժողովուրդը իրենից՝ օժանդակելու, ստեղծելու... տնտեսական հետագա զարգացման հիմքեր: Եվ երբ Արեւմուտքը... զբաղված էր ուղեղներ կամ դրանց աշխատանքի արտահանմամբ...»: Դե արի ու մի՝ զարմացիր: Երկու տրամաբանորեն իրար հակասող պնդումներ:

Մի՞թե պրն Մայիլյանը կարծում է, որ Արեւմուտքը, ամեն օր «արթնանալով», ցավով հիշում է, որ չի կատարել իր «ինտերնացիոնալ» պարտքը հայ ազգի նկատմամբ եւ, իր մնացած գործերը թողած, նետվելու է Հայաստան՝ հայերի համար դրախտ ստեղծելու: Ի՞նչ ցավալի փաստ. հայ ժողովուրդը չի ցանկանում ընդունել արեւմտյան արժեքները: Մի՞թե, ժողովուրդ, քեզ չի՞ հետաքրքրում բազմաթիվ ֆիլմերում արտացոլված արեւմտյան վարքն ու բարքը, մի՞թե քեզ հետաքրքիր չէ, թե ինչպես, օրինակ, խոհանոցի սեղանի վրա կարելի է զբաղվել... սեքսով (եթե, իհարկե, դուք ունեք խոհանոցի ամուր սեղան), կամ լսելու այդ ժամանակ կնոջ վավաշոտ ճչոցները: Այսքան էլ անհասկացող ժողովո՞ւրդ. ոչինչ չի հասկանում:

Այժմ անցնենք Ա. Մայիլյանի հոդվածում ներարկված մյուս պրոբլեմին: Բերենք մի մեջբերում հոդվածից. «Այսօր հայ բարձրաստիճան մտավորականը գովաբանում է Խորհրդային Միությունը, կոմունիստական «դրախտը» ...» :

Պրն. Մայիլյան, այն դանթեական դժոխքը, որ դուք ստեղծեցիք Հայաստանում, ստիպում է՝ ոչ միայն «բարձրաստիճան մտավորականին» (այստեղ դուք կանխամտածված աղավաղում եք իրականությունը), այլեւ ցանկացած ազնիվ մարդու, աշխատավորի, գյուղացու եւ «ցածրաստիճան մտավորականի»՝ կարոտով հիշել այն օրերը, երբ նա ապրում էր մարդավարի՝ վախ չունենալով վաղվա օրվա հանդեպ, երբ գոյություն ունեին սոցիալական երաշխիքներ: Երբ ցանկացած հայ ընտանիք, եթե ոչ ամեն տարի, ապա գոնե երկու տարին մեկ կարող էր մեկնել ծովափնյա հանգստի, երբ... ինձ թվում է՝ չարժե շարունակել թվարկումը:

Եվ այսպես, որտեղից, պրն Մայիլյան, Ձեր այդ խոր ատելությունը կոմունիստականի նկատմամբ: Եթե խոսքը կոմունիստական գաղափարախոսության մասին է, ապա այն մարդկային հասարակության ստեղծած ամենամեծ արժեքներից է (եթե ոչ ամենամեծը): Կամ գուցե Դուք չեք հասկանում, թե ինչ է կոմունիզմը. մարդկային հասարակությունը վաղ թե ուշ հասնելու է կոմունիստական հասարակարգի: Կոմունիստական գաղափարախոսությունը մարդկությանը ներկայացված միակ ընդունելի գաղափարախոսությունն է: Ինչո՞ւ է այդ գաղափարախոսությունն այդպիսի ատելություն առաջացնում Ձեր մեջ: Կբերեմ մի պարզ թեսթ. ցանկացած ազնիվ, կարգին նիստ է, ցանկացած բարեպաշտ քրիստոնյա բավականին կոմունիստ: Եթե այդ կատեգորիայի մարդիկ Ձեզ մոտ ոչ հաճելի ասոցիացիաներ են առաջացնում, դա Ձեր անձնական գործն է: Չարժե այդպիսի հեգնանքով խոսել այն անձանց մասին, որոնք հասկանում են կոմունիստական արժեքները եւ փորձում են համուղղել հասարակության ուժերը՝ նման հասարակարգ կառուցելու համար:

Մարդկային հասարակությունը ունի իր զարգացման օրենքները, եւ այդ օրենքներից բռնի ուժով ցանկացած շեղում հանգեցնում է մեծագույն աղետների: Այդպիսին էր վերակառուցում կոչվող գործընթացը:

Այժմ մի քանի խոսք մեր «ամուլ» մտավորականների մասին: Համաշխարհային կապիտալի կողմից վարձված «դեմոկրատները», «ազատության ջատագովները» դասական ոճով վարկաբեկեցին, ժողովրդից մեկուսացրին մտավորականությանը: Ես ականատես եւ վկա եմ, թե ինչպիսի խղճուկ, նվաստալի, վիրավորական վիճակում էին հայտնվել համաշխարհային ճանաչում ունեցող եւ մեր ազգի փառքը կազմող գիտնականներ: Եվ այսօր, երբ մտավորականությունը, թեեւ «երկչոտ» քայլեր է անում՝ վերականգնելու, պահպանելու ազգային արժեքները, ուղղություն տալու իր ժողովրդին, որից նա սնվել է, ոչ ոք բարոյական իրավունք չունի նրան պախարակելու:

Այժմ մի քանի խոսք Չեչնիայի դեպքերի վերաբերյալ: Պրն Մայիլյանին շատ է անհանգստացնում Չեչնիայի ճակատագիրը: Ինչպիսի՞ ինտերնացիոնալիզմ: Ճիշտ է նրա ձեւակերպումը այն թեզի վերաբերյալ, որ ռուս-չեչենական հակամարտության ելքն ուղղակիորեն շոշափում է նաեւ Հայաստանի պետական շահերը, բայց հաջորդ արտահայտությունը, որ «... չեչենական խնդիրը խոչընդոտում է ռուս-հայկական հետագա կապերի զարգացմանը...», ուղղակի անհեթեթություն է:

Զարմանալի է, ինչպիսի՞ սեր չեչենական ավազակախմբերի նկատմամբ: Գո՞ւցե պատվիրենք մահապակներ եւ ազգովին այցելենք չեչենական «հերոսների» գերեզմանները: Օրինակ, այսպիսի ժապավենով մահապակ՝ «Անմոռանալի Խաբաբին՝ երախտապարտ հայ ժողովրդից...»:

Չեչնիայի հարցն, իրոք, բարդ քաղաքական-ստրատեգիական հարց է, եւ գաղտնիք չէ, որ հրահրված է միջազգային կապիտալի կողմից, իրագործվել եւ իրագործվում է նրա կողմից վարձված ռուսական «դեմոկրատների» միջոցով (սկսած Ելցինից՝ վերջացրած...): Նպատակը ռուսական «կայսրության» հետեւողական կործանումն է:

Ընդհանրապես, ազգային ստրատեգիան մշակելիս, պետք է բացառվեն բոլոր այն տարբերակները, որոնք, թեեւ չնչին հավանականությամբ, կարող են հանգեցնել ազգի բնաջնջմանը: Սա հիմնարար պոստուլատ է:

ՌՈՒԶԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հ. Գ.-Երբ ես գտնվում եմ լեռներում, ապա հաճույքով, մտովի կամ բարձրաձայն արտասանում եմ Պուշկինի չմնաց բանաստեղծությունը կամ նրա ոչ պակաս չմնաց հայերեն թարգմանությունը: Այս առումով ես լիովին համաձայն եմ պրն Լեւոն Հախվերդյանի հետ, որ Ա. Մայիլյանը այս բանաստեղծության կոնտեքստը սխալ է ընկալել, եւ իրոք, արբաղդություն է սոցիալիզացիա անել՝ հենվելով վերնագրի վրա:

ԱԶԳ

Սփյուռք

Սփյուռքը եւ հայրենիքը լիբանանահայ մտավորականի աչքերով

Ծիրայր Նաիրին ծանոթ անուն է թե սփյուռքում, թե հայրենիքում: Վաստակաւոր լրագրող է, 1958-95 թթ. եղել է Բեյրութի «Արարաս» օրաթերթի գլխավոր խմբագիրը, 1995-ից մինչեւ այժմ «Նայիրի» շաբաթաթերթի արտոնատերն ու խմբագիրն է: ՍԴ Հնչակյան կուսակցության լիբանանյան ակտիվ գործիչներից ու ղեկավարներից մեկն է տասնամյակներ շարունակ, մի շրջան, 1987-ից, զբաղեցրել է կուսակցության ատենապետի պաշտօնը, այժմ էլ կենտրոնական վարչության անդամներից է: Հեղինակ է 4 գրքերի, որոնցից մեկը թարգմանված է իսպաներեն: Խորհրդային Հայաստանի իշխանություններից գնահատվել է «Պատվո նշան» շքանշանով, պատվոգրով: Փարիզի «Արարաս» ակադեմիայի թղթակից անդամ է, Երեւանի Հր. Աճառյանի անվան համալսարանի պատվավոր դոկտոր:

– Դուք Նաիրի, իբրեւ լրագրողի ինձ ամենից առաջ հետաքրքրում է Ձեր խմբագրած «Նայիրին»:

– «Նայիրին» շաբաթաթերթ է, լույս կտեսնե 8-10 օրը մեկ: Շատ ալ բծախնդիր չենք, որ շաբաթն ավարտելուն պես թերթը լույս տեսնե: Չենք ուզեր շատ շատցող ըլլալ՝ ի վնաս թերթի բովանդակության: Թերթը ավելի քան 20 երկիրներ մուտք կգործե, ներառյալ Հայաստանը: Աշխատակիցի տագնապ չունինք, ընդհակառակը՝ մեծ թվով աշխատակիցներ կան, որոնցից միայն Հայաստանի աշխատակիցներուն հոնորար կվճարենք՝ նաեւ հաշվի առնելով Հայաստանի թղթակիցներուն վիճակը: Խմբագրակազմը 3 հոգի ենք՝ ես, Պեպո Սիմոնյանը եւ Գեւորգ Տարոնին, որոնք չեն վարձատրվիր նմանապես: Համակարգիչին վրա նյութերը իմ տիկինս կբարե: Կրնամ ըսել, որ Բեյրութի հայալեզու թերթերուն մեջ միայն «Ազդակն» է, որ առավելություն ունի մեր վրա տպաքանակի տեսակետով: Բովանդակային առումով ընդհանուր կարծիքն այն է, որ թերթը հետաքրքրական է: Կուսակցական թերթ չէ, թեեւ ես կուսակցական եմ, սակայն ունի իր ազգային հաղթականությունը, ուղղությունը, կիրգե խոսքի, մամուլի ազատությունը, կարծիքի ազատությունը: Եվ այս լայնախոհությունը շատ գնահատված է ընթերցողներու կողմե:

– Ինչպե՞ս է այսօր գաղութի վիճակը:

– Պատերազմի շրջանեն սկսած գաղութի հայաթափումը, դժբախտաբար, կշարունակվի: Լիբանանահայ կազմակերպությունները, կուսակցությունները, հանրային կարծիքի ուրիշ բեւեռներ կգիտակցին այդ վտանգը եւ կանխելու համատեղ քայլեր կառնեն: Սահմանադրությունը համայնքներուն իրավունքներ կվերադարձնե, ելնելով նաեւ անոնց թիվեն: Մեր թիվը այժմ բավականին նվազած է Լիբանանի մեջ: Եվ հիմա հակահայ ուժեր կաշխատին սահմանափակել մեր իրավունքները: Օրինակի համար, չեն ուզեր, որ մենք խորհրդարանի մեջ վեց կամ յոթը եռեսփոխան ունենանք, ըսելով, որ եթե յուրաքանչյուր 25 հազարի համար մեկ եռեսփոխան պիտի տաք, ձեր ներկայիս թիվով չորս հոգի կամ 5 հոգի պիտի ունենաք: Մոտերս եռեսփոխանական ընտրություններն են երկրի մեջ, եւ հիմա հայ կուսակցությունները, կրոնական համայնքները (կաթոլիկները, բողոքականները) համախմբված են, որ ընտրություններուն մասնակցին այնպիսի ձեւով, որպեսզի ամեն բանե առաջ հայ համայնքին ունեցած մենաշնորհները եւ իրավունքները պահպանվին: Եվ եթե հնարավոր է՝ միացյալ ցանկով ընտրություններուն մասնակցինք:

– Կառավարական շրջանակները պահպանո՞ւմ են նույն բարյացակամությունը հայ համայնքի նկատմամբ, ինչ կար նախքան պատերազմը:

– Այո, կպահեն նախ այն պատճառավ, որ ի պատիվ մեր ժողովուրդի պիտի ըսեմ՝ նախորդ տասնամյակներու դառն փորձառություններեն իմաստնացած, քաղաքացիական պատերազմի 16 տարիներուն կրցավ պահել իր ներքին միասնությունը: Բացի հայերեն բոլոր համայնքները պառակտվեցան, զենք բարձրացուցին իրարու դեմ: Միայն մենք դրական չեզոքության քաղաքականություն որդեգրեցինք, ըսելով, որ եղբայրասպան այս պատերազմին չենք մասնակցիր: Փորձեցին, անշուշտ, մեզի գրգռելու, հրահրելու, մեկ կողմը դաշնակցություն, մեկ կողմը հակադաշնակցական ուժերը իրարու դեմ հանելու, ինչպես կատարված էր 1958 թվականին: Այս անգամ ալ փորձեցին հրահրել հատկապես Լիբանանի բաժանման կողմնակից արեւմտամետ եւ մոլեռանդ քրիստոնյա ուժերը, քանի մը ոճիրներ ալ գործեցին, որպեսզի միանանք իրենց: Չմիացանք, տեղ-տեղ ալ նույնիսկ զենքով դիմադրեցինք այդ գրգռություններուն ու սադրանքներուն: Եվ ընդհակառակը, մարդասիրական օգնություն ցույց տվինք երկու կողմերուն ալ, օգնելով ոմանց վիրավորներու փոխադրության, մյուսներուն հայթայթելով սննդամթերք, դեղորայք, փախստականներ պատսպարելով եւ տեղափոխելով միմյանց ազդեցության գոտիները: Այդ բոլորը մինչեւ այսօր բարի նախանձ ստեղծած է մեր ժողովուրդին նկատմամբ: Եվ առավելաբար իսլամ կրոնատեսներ հիմա կըսեն, թե դուք Լիբանանի մեջ ամենախելոք համայնքը եղաք, եւ դուք իսկական լիբանանցի եք, երկիրը սիրող մարդիկ եք, որոնց ձեռքերը լիբանանցիներու արյունով չներկվեցան, ձեր ձեռքով քար չինկավ Լիբանանի պետական կառույցին վրայեն:

– Ներգաղթային տարանջատվածությունը, որ տասնամյակներով մեր դժբախտությունն է եղել, այսօր կա՞:

– Բարեբախտաբար՝ ոչ: Հիմա բոլորը բոլոր եկեղեցիներն ալ կերթան, բոլորը բոլոր թաղամասերու մեջ ալ կարելի, իրարու հանդիսություններուն ներկա կըլլան, ակումբներուն կհաճախեն, անկախ այն բանեն, թե որ կուսակցությունը կազմակերպած է: Նախկին մոլեռանդությունը, խստությունը, այլամերժությունը, մինչեւ իսկ թշնամանքը վերացած է: Երբ որ Անթիլիասի մեջ Արամ Ա կաթողիկոսի հովանավորությամբ ձեռնարկ մը կըլլա, կաթողիկոսարանն անխտիր բոլորին հրավեր կուղարկե, բոլոր կուսակցություններուն, միություններուն, մտավորականներուն: Եվ ամենքն ալ կերթան, ներկա կգտնվին:

– Լիբանանահայությունը մայրենի լեզվի պահպանման խնդիր չունի՞:

– Ամենեւին: Լեզուն, կենցաղը, ազգային սովորությունները պահպանած ենք: Սակայն տխուր իրողություն մը կա, որ օտար դպրոցներ, վարժարաններ հաճախող հայ ուսանողներու թիվը կավելնա: Լիբանանի մեջ ալ տնտեսական տագնապ կա: Հոս կկարծեն, թե Հայաստանեն դուրս ամեն ոք փառավոր կյանք մը ունի: Այդ սխալ պատկերացումն ալ երբեմն ըսել կուտա իրենց, թե սփյուռքը ի՞նչ նստած է, թող օգնե մեզի: Բայց սփյուռքի մեջ ամեն ոք Քըրք Քըրքորյան չէ: Սփյուռք ըսվածը ինքն իր յուղով տաքկվող հավաքականություն մըն է՝ հարյուրեն 80 տոկոս: Տնտեսական անձկությունը թի հայալեզու թերթերուն մեջ միայն «Ազդակն» է, որ առավելություն ունի մեր վրա տպաքանակի տեսակետով: Բովանդակային առումով ընդհանուր կարծիքն այն է, որ թերթը հետաքրքրական է: Կուսակցական թերթ չէ, թեեւ ես կուսակցական եմ, սակայն ունի իր ազգային հաղթականությունը, ուղղությունը, կիրգե խոսքի, մամուլի ազատությունը, կարծիքի ազատությունը: Եվ այս լայնախոհությունը շատ գնահատված է ընթերցողներու կողմե:

– Ինչպե՞ս է այսօր գաղութի վիճակը:

– Պատերազմի շրջանեն սկսած գաղութի հայաթափումը, դժբախտաբար, կշարունակվի: Լիբանանահայ կազմակերպությունները, կուսակցությունները, հանրային կարծիքի ուրիշ բեւեռներ կգիտակցին այդ վտանգը եւ կանխելու համատեղ քայլեր կառնեն: Սահմանադրությունը համայնքներուն իրավունքներ կվերադարձնե, ելնելով նաեւ անոնց թիվեն: Մեր թիվը այժմ բավականին նվազած է Լիբանանի մեջ: Եվ հիմա հակահայ ուժեր կաշխատին սահմանափակել մեր իրավունքները: Օրինակի համար, չեն ուզեր, որ մենք խորհրդարանի մեջ վեց կամ յոթը եռեսփոխան ունենանք, ըսելով, որ եթե յուրաքանչյուր 25 հազարի համար մեկ եռեսփոխան պիտի տաք, ձեր ներկայիս թիվով չորս հոգի կամ 5 հոգի պիտի ունենաք: Մոտերս եռեսփոխանական ընտրություններն են երկրի մեջ, եւ հիմա հայ կուսակցությունները, կրոնական համայնքները (կաթոլիկները, բողոքականները) համախմբված են, որ ընտրություններուն մասնակցին այնպիսի ձեւով, որպեսզի ամեն բանե առաջ հայ համայնքին ունեցած մենաշնորհները եւ իրավունքները պահպանվին: Եվ եթե հնարավոր է՝ միացյալ ցանկով ընտրություններուն մասնակցինք:

– Կառավարական շրջանակները պահպանո՞ւմ են նույն բարյացակամությունը հայ համայնքի նկատմամբ, ինչ կար նախքան պատերազմը:

– Այո, կպահեն նախ այն պատճառավ, որ ի պատիվ մեր ժողովուրդի պիտի ըսեմ՝ նախորդ տասնամյակներու դառն փորձառություններեն իմաստնացած, քաղաքացիական պատերազմի 16 տարիներուն կրցավ պահել իր ներքին միասնությունը: Բացի հայերեն բոլոր համայնքները պառակտվեցան, զենք բարձրացուցին իրարու դեմ: Միայն մենք դրական չեզոքության քաղաքականություն որդեգրեցինք, ըսելով, որ եղբայրասպան այս պատերազմին չենք մասնակցիր: Փորձեցին, անշուշտ, մեզի գրգռելու, հրահրելու, մեկ կողմը դաշնակցություն, մեկ կողմը հակադաշնակցական ուժերը իրարու դեմ հանելու, ինչպես կատարված էր 1958 թվականին: Այս անգամ ալ փորձեցին հրահրել հատկապես Լիբանանի բաժանման կողմնակից արեւմտամետ եւ մոլեռանդ քրիստոնյա ուժերը, քանի մը ոճիրներ ալ գործեցին, որպեսզի միանանք իրենց: Չմիացանք, տեղ-տեղ ալ նույնիսկ զենքով դիմադրեցինք այդ գրգռություններուն ու սադրանքներուն: Եվ ընդհակառակը, մարդասիրական օգնություն ցույց տվինք երկու կողմերուն ալ, օգնելով ոմանց վիրավորներու փոխադրության, մյուսներուն հայթայթելով սննդամթերք, դեղորայք, փախստականներ պատսպարելով եւ տեղափոխելով միմյանց ազդեցության գոտիները: Այդ բոլորը մինչեւ այսօր բարի նախանձ ստեղծած է մեր ժողովուրդին նկատմամբ: Եվ առավելաբար իսլամ կրոնատեսներ հիմա կըսեն, թե դուք Լիբանանի մեջ ամենախելոք համայնքը եղաք, եւ դուք իսկական լիբանանցի եք, երկիրը սիրող մարդիկ եք, որոնց ձեռքերը լիբանանցիներու արյունով չներկվեցան, ձեր ձեռքով քար չինկավ Լիբանանի պետական կառույցին վրայեն:

– Ներգաղթային տարանջատվածությունը, որ տասնամյակներով մեր դժբախտությունն է եղել, այսօր կա՞:

– Բարեբախտաբար՝ ոչ: Հիմա բոլորը բոլոր եկեղեցիներն ալ կերթան, բոլորը բոլոր թաղամասերու մեջ ալ կարելի, իրարու հանդիսություններուն ներկա կըլլան, ակումբներուն կհաճախեն, անկախ այն բանեն, թե որ կուսակցությունը կազմակերպած է: Նախկին մոլեռանդությունը, խստությունը, այլամերժությունը, մինչեւ իսկ թշնամանքը վերացած է: Երբ որ Անթիլիասի մեջ Արամ Ա կաթողիկոսի հովանավորությամբ ձեռնարկ մը կըլլա, կաթողիկոսարանն անխտիր բոլորին հրավեր կուղարկե, բոլոր կուսակցություններուն, միություններուն, մտավորականներուն: Եվ ամենքն ալ կերթան, ներկա կգտնվին:

– Լիբանանահայությունը մայրենի լեզվի պահպանման խնդիր չունի՞:

– Ամենեւին: Լեզուն, կենցաղը, ազգային սովորությունները պահպանած ենք: Սակայն տխուր իրողություն մը կա, որ օտար դպրոցներ, վարժարաններ հաճախող հայ ուսանողներու թիվը կավելնա: Լիբանանի մեջ ալ տնտեսական տագնապ կա: Հոս կկարծեն, թե Հայաստանեն դուրս ամեն ոք փառավոր կյանք մը ունի: Այդ սխալ պատկերացումն ալ երբեմն ըսել կուտա իրենց, թե սփյուռքը ի՞նչ նստած է, թող օգնե մեզի: Բայց սփյուռքի մեջ ամեն ոք Քըրք Քըրքորյան չէ: Սփյուռք ըսվածը ինքն իր յուղով տաքկվող հավաքականություն մըն է՝ հարյուրեն 80 տոկոս: Տնտեսական անձկությունը պատճառ կըլլա, որ շատ մը հայ ծնողներ իրենց զավակները տանին արաբական պետական (անվճար) դպրոցներ: Եվ ցավալի է, որ այդ տոկոսը կավելնա:

– Ձեր դիտումներով, ե՞րբ մենք կհասնենք սփյուռք-Հայաստան հարաբերությունների ցանկալի մակարդակի:

– Մենք կհասնինք այդ ցանկալի մակարդակին, երբ Հայաստանը իր քաղաքական կացությամբ վստահություն կներշնչե արտասահմանի եւ հայերուն, եւ ոչ հայերուն: Իսկ այդ վստահությունը այժմ չկա: Երբ երկրի պառլամենտի մեջ սպանդ կըլլա, ո՞ր հայը, հայը՝ ծգենք, ո՞ր օտար դրամատերը կհամարձակի այստեղ գալ եւ դրամագլուխ դնել: Մեզ մոտ կար լիբանանցի գործարար մը, որ եկեր էր այստեղ, ներդրում կատարած էր, ուներ հայաստանցի գործընկերներ: Օր մը այդ գործընկերները ներս մտած են սենյակ, ծեծած են զինք, փաստաթուղթերը պատռած, զինք էլ վռնդած են: Մարդը եկած էր այնտեղ գանգատելու: Կըսեր՝ երբամ Հայաստանի դեսպանին մոտ, գրուցեմ, թե իմ իրավունքս ինչո՞ւ հափշտակեցին եւ ինչո՞ւ վռնդեցին: Սա առասպել չէ, իրականություն է: Մարդիկ կուգան այստեղ, գործ կբանան եւ հաճախ պարկեշտ գործընկերներ չեն ունենար: Ասիկա վիճակագրիչ է: Երկրորդ՝ Հայաստանը տնտեսական վերականգնումի ծրագիր մը չունի: Երրորդ՝ սփյուռք հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումները ես կգտնեմ անգոհացուցիչ, մինչեւ իսկ՝ անախորժ: Ժամանակին, Խորհրդային Հայաստանի շրջանին, որ հիմա կայրանենք, Հայաստանի ռադիոն հատուկ հաղորդումներ կհեռարձակեր՝ սփյուռքը որգեւորելու, անոր հայրենասիրությունը հրահրելու եւ հայրենիքին մոտեցնելու համար: Հիմա Հայաստանի հեռատեսիլը դեռի սփյուռք գովազդներ ու զանազան-զարմանազան լոթոներ կհեռարձակե: Խնայեցեք մեզ, Աստծո սիրուն: Լոթոներո՞վ է, որ հայը հայ պիտի մնա սփյուռքի մեջ: Ասիկա՝ մեր նախագահին էլ ըսած եմ, երբ Լիբանան էր:

Հարցազրույցը վարեց
ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ-ի հայ գաղթօջախի պատմությունը

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունում լույս է տեսել «Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը» պատմագիտական արժեքավոր աշխատությունը: Գիրքը հեղինակի՝ Քնարիկ Ավագյանի 1995 թ. պաշտպանած թեկնածուական ատենախոսության լրամշակված տարբերակն է: Գիրքը տպագրվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ (խմբագիր՝ ակադեմիկոս Վարդգես Միքայելյան): Հրատարակության հովանավորն է Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության գործադիր տնօրեն, վերապատվելի Մովսես Ճանապազյանը: Հեղինակն իր գիրքը նվիրել է Արտաքին առաքելությունների համամիսիոներական ամերիկյան խորհրդի (ծանոթ՝ Պորտ անունով- Գ. Յ.) եւ Մերձավոր Արեւելքի նպաստամատույցի 180-ամյա եւ 80-ամյա տարելիցներին, որոնք նշվել են անցյալ տարի:

239 էջանոց այս գիտական աշխատությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից (իրենց ենթագլուխներով), վերջաբանից, հավելվածից, ծանոթագրությունների բաժնից ու օգտագործված աղբյուրների եւ գրականության ցանկից: Գրքի ավարտին բերված են անգլերեն եւ ռուսերեն ամփոփումներն ու հեղինակի կենսագրության մասին տեղեկանքը:

«Ներածությունում» հեղինակը գրում է իր թեմայի նորույթի կարեւորության, արդիականության, սկզբնաղբյուրների եւ իր աշխատանքի հիմնական նպատակի մասին. «Հանգամանալից ու բազմակողմանի ուսումնասիրել եւ առարկայորեն ներկայացնել ԱՄՆ-ի հայ գաղութի պատմության մի կարեւոր ու սվար ժամանակահատվածի համալիր պատկերը՝ սկսած 1618 թ. Նոր երկիր առաջին հայի՝ Ջոն Մարտին Հայի ոտնադրումից մինչեւ 1924 թ.՝ ամերիկյան Կոնգրեսի կողմից ԱՄՆ մեկնող տարբեր ազգերի, այդ թվում նաեւ հայ գաղթականների նկատմամբ դրված թվային սահմանափակումը՝ մասնաբաժինը (Quota)» (էջ 10):

Առաջին գլուխը՝ բաժանված երկու ենթագլխի, ներկայացնում է գաղութի վաղ պատմությունը (17-րդ դ. սկիզբ-18-րդ դարի առաջին կես), երբ ԱՄՆ մեկնող հայերի քանակը շատ փոքրաթիվ էր, առա՝ 1834-1924 ժամանակաշրջանը, երբ հայերի ԱՄՆ գաղթը հետզհետե զանգվածային բնույթ է ընդունում: Հեղինակը մանրամասն գրում է գաղթականների տարիքի, սեռի, զբաղմունքների, մեկնարկի երկրների, գրագիտության եւ այլ հատկանիշների մասին, որոնք ուղեկցվում են վիճակագրական աղյուսակներով:

Երկրորդ գլուխը վերնագրված է՝ «Հայերի տեղաբաշխումը եւ սոցիալ-տնտեսական վիճակը ԱՄՆ-ում»: Առանձին ենթագլուխներով ներկայացվում են գաղթականների տեղաբաշխումն ըստ նահանգների, քաղաքների եւ այլ բնակավայրերի, հայերի զբաղմունքը, կենսամակարդակը, ամերիկահայ ընտանիքը, կենցաղն ու բարքերը: Կարեւորվում է հայոց դերը հատկապես գորգավաճառության ու հողագործության բնագավառներում: Հեղինակն անդրադառնում է բնակարանային եւ առողջապահական պայմաններին, մահացության ցուցանիշներին, խառն ամուսնություններին, ծնելիությանն ու ծնունդներին, ներընտանեկան հարաբերություններին եւ այլն՝ վերլուծելով յուրաքանչյուր երեւույթի ծնունդ տվող ազգային եւ տեղական պայմաններն ու պատճառները: Այս գլուխը եւս հարուստ է վիճակագրական աղյուսակներով:

Երրորդ գլուխը նվիրված է հասարակական-քաղաքական հարաբերություններին: Առաջին ենթագլխում Ք. Ավագյանը գրում է ամերիկահայ բազմատասնյակ միությունների, դրանց նպատակների եւ գործունեության մասին՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենատարբեր հայրենակցական միությունների գործունեությանը նախեղեռնյան եւ հետեղեռնյան տարիներին: Ներկայացված են նաեւ առավել կարեւոր միությունները՝ ՀԲԸՄ-ը, Կարմիր խաչը, Վարդանանց ասպետները եւ այլն: Առավել մանրամասն ներկայացվել է ավանդական երեք կուսակցությունների, նաեւ՝ Ամերիկահայ սոցիալիստական կուսակցության եւ Հայ չեզոքների համազգային միության գործունեությունը: «Ամերիկահայ կարգը բնորոշի հետ» ենթագլխում հեղինակը շարադրում է 1914-20 թթ. ամերիկահայերի բազմաբնույթ օժանդակությունն ազատագրական պայքարին ու իրենց բնորոշների օգնության կարոտ հայրենակիցներին, անդրադառնում այս առթիվ ստեղծված միություններին, մասնավորաբար Ամերիկայի հայ ազգային միության աշխատանքներին (վերջինիս ղեկավարն էր վերակազմյալ Հնչակյան, ապա ՌԱԿ գործիչ Միհրան Սվազլին, որն, ի դեմ, հեղինակի հարազատն է):

Չորրորդ գլուխը վերնագրված է «Ամերիկահայ հոգեւոր-մշակութային կյանքը», ուր, առանձին ենթագլուխներով ներկայացվում են եկեղեցին, պարբերական մամուլն ու տպարանները, կրթական եւ ուսումնական վիճակը, գրականությունը, թատրոնը եւ կինոն, երգարվեստը եւ կերպարվեստը: Յուրաքանչյուր ենթագլուխ բաժանված է մասերի՝ հայ առաքելական, հայ ավետարանական եւ հայ կաթողիկե եկեղեցիներ (իրենց տեղաբաշխումներով), կուսակցական, կրոնական, միութենական, տարաբնույթ, անգլիալեզու, հայատառ թուրքերեն մամուլ եւ այլն: Այս բոլորին ուղեկցում են վիճակագրական ցուցակները:

«Վերջաբանում» ի մի են բերված աշխատության եզրակացությունները: Գրքի կարեւորագույն մասերից է «Հավելվածը»: Այս բաժնի սկզբին հեղինակը նկարագրում եւ պայմանական դասակարգման է ենթարկում Պոլսի հայոց պատրիարքարանի արխիվի «Ամերիկա» ֆոնդի նյութերը, որոնք, իր այս աշխատության շնորհիվ, առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Արտատպված են մի քանի փաստաթղթեր, որոնք արտահայտում են գաղթականների դիմագրաված զանազան դժվարությունները, մանավանդ ազգային այլասերման անխուսափելիությունից սարսափը: Այս առումով հատկանշական է նաեւ Ն. Ճ. սկզբնատառերով ստորագրողի նամակը Պոլսի Ջավեն պատրիարքին, ուր նա գրում է. «...Ինքզինքնիս չի խաբենք, նոր աշխարհ գացող հայերը ընդմիշտ կորուած են ազգին համար» (էջ 192):

Քնարիկ Ավագյանը կատարել է հսկայական ծավալի աշխատանք այս աշխատությունը գրելու համար: Նրան հաջողվել է հնարավոր փոքր ծավալում ներկայացնել ամերիկահայ գաղութի պատմության երեք դարից ավելի ժամանակաշրջանի համապատկերը՝ իր զանազան կողմերով: Աշխատությունը հարուստ է վիճակագրական տվյալներով, որոնք թեեւ երբեմն հոգնեցնում են ընթերցողին, սակայն լավագույնս արտացոլում են ընթացքվող խնդրի ամենատարբեր կողմերը եւ կարող են սկզբնաղբյուր ծառայել հետագա ուսումնասիրողների համար:

Աշխատության մեջ տեղ են գտել մանր թերություններ, մասնավորաբար կուսակցությունների մասին էջերում: Հիշենք դրանցից հետեւյալները. «Շամ» փոխանակ ընդունված «Դամասկոսի» (էջ 98), Սաղահ Գուլյանի անունը ոչ թե «Սաղահ» է (էջ 100), այլ՝ Ստեփան: Ճշտենք՝ կուսակցություններից միայն ՀՅԴ-ն ունեցել է եւ ունի կենտրոնական կոմիտե եւ բյուրո, մյուսներն ունեցել են եւ ունեն վարչություններ եւ կենտրոնական վարչություն. հայ քաղաքական կուսակցություններից Ամենական կուսակցությունը եւ նրա ժառանգորդները չեն ստեղծվել ռուսական հեղափոխական կուսակցությունների օրինակով. հայկական կուսակցությունների անվանումներն իրենց պատշաճական անունների փոխարեն ներկայացվում են տարընթերցումներով: Կարելի էր «Պայքար» եւ «Երիտասարդ Հայաստան» կուսակցական պարբերականների համար նշել, որ դրանք հայրենադարձվել են Երեւան 1996 թ. սկզբին ու 1998 թ. աշնանը: Սկզբունքային սխալ է «Եհովայի վկաներ» աղանդի «Դիտարան» եւ այլ պարբերականները զետեղել հայ ավետարանական պարբերական մամուլի շարքում (էջ 142): Նկատի պետք է ունենալ, որ դասական ուղղագրության մեջ «եւ» կցագիրը գոյություն չունի. պետք է գրել «եւ» տեսքով:

Վերոհիշյալ նկատողություններն ու մանր թերիները բնավ չեն նսեմացնում Քնարիկ Ավագյանի ուսումնասիրության արժեքը: Հուսով ենք, որ հայ ընթերցողին շուտով կներկայացվի հեղինակի նոր աշխատությունը՝ վերջին 75 տարիների ԱՄՆ-ի հայկական գաղթօջախի պատմությունը, որով Քնարիկ Ավագյանը կդառնա շուրջ չորսդարյա պատմություն ունեցող այս կարեւոր գաղթօջախի ամբողջական պատմության պատմագիրը:

ԳԵՎՈՐԳ ՅԱՀԸԾՅԱՆ

ԱԶԳ

Մշակույթ

Քսաներորդ դարի վեպն առանց մեզ

Ֆրանսիական հռչակավոր «Լարուս» հանրագիտարանը 2000 թ. հատուկ հրատարակության մեջ զետեղել է մի չափազանց ուշագրավ ցուցակ. «Քսաներորդ դարի լավագույն վեպերը»:

Շատերին պիտի զայթակղած լիներ այս իսկապես հետաքրքիր, բայց հանդուգն, գուցեեւ պատասխանատու գաղափարը: Հոգու վրա մեղք վերցնելու պես մի բան է: Եվ իսկապես, հոդվածներում, հարցազրույցներում, բանավոր ելույթներում շատերն են փորձել անցած դարաշրջանի վիպական սերուցքը ճշտել, սակայն չեմ կարողանում մտաբերել մի դեպք, որտեղ հակասե եւ հանվանե, վերնագրով ու հրատարակչությամբ, լավագույնների «հավաքակազմը»:

Բայց ահա, «Լարուսը» գնացել է այդ «հանդգնությանը» աշխատելով իր պատասխանատվությունը հիմնավորել եւ հնարավոր մեղսագործությունը նվազագույնի հասցնել:

Այսպիսով, ներկայացված է 60 հեղինակի նույնքան վեպ: Առաջին հարցականը ծնվում է այս թվից. ինչո՞ւ ոչ 50 կամ 70... Ըստ երեւույթին, ի սկզբանե «թիվը» չէր, այլ...

Ի՞նչ էր ի սկզբանե, այլ կերպ ասած, ի՞նչ սկզբունքով են ընտրվել դարի լավագույն վեպերը: Մանրամասն ծանոթանալով ցուցակին, գալիս ես այն եզրակացության, որ ընտրությունը կատարվել է, եթե ոչ պատահական, ապա առանց որեւէ լուրջ եւ հիմնավոր սկզբունքի: Այո, աշխարհի մեծ գրականությունները ներկայացված են ըստ արժանվույն. ֆրանսիական, անգլիական, գերմանական, իտալական, ռուսական, ամերիկյան... Սակայն պատմությունը վաղուց է ապացուցել, որ «փոքր ածուները» եւս կարող են դարակազմիկ երկեր ստեղծել, ինչպես, ասենք փոքրաթիվ իսլանդացիք, ի դեմս Հալդոր Լաքսնեսի, քսաներորդ դարի մեծագույն վիպասաններից մեկի, որն այս ցուցակից դուրս է մնացել:

Կարելի է առաջնորդվել նաեւ մեկ այլ, ավելի հիմնավոր սկզբունքով. որո՞նք են այն գործերը, որ լավագույնս ներկայացրել են դարաշրջանի կարեւորագույն իրադարձությունները, հիմնական միտումները, գործեր, որոնք դարաշրջանի դիմագիծն են ստեղծում:

Այս առումով եւս ցուցակը թերի է: Օրինակ, ինչպե՞ս կարելի է քսաներորդ դարը պատկերացնել առանց չեխ գրող Յարոսլավ Հաշեկի «Քաջ զինվոր Շվեյկը» հանճարեղ վեպի, որտեղ երգիծանքի բացառիկ ուժով ծաղրված է մարդկային մեծագույն տխմարությունը՝ պատերազմը: Ես դժվարանում եմ համաշխարհային գրականության բազմահազար տարիների ժառանգության մեջ հավասարազոր մի գործ հիշել, որտեղ այսպես ուժգին ներկայացված լիներ պատերազմի ողջ անհեթեթությունը:

Սակայն ցուցակը կազմողները պատշաճ չեն գտել «Դոն Կիխոտին» եւ «Գուլիվերին» համարժեք այդ վեպը ճշել: Նույն կերպ ցուցակից դուրս է մնացել դարի դիմագիծը կերտող, համաշխարհային զույգ պատերազմների արհավիրքները ներկայացնող Էրիխ-Մարիա Ռեմարկը... Իսկ կարելի՞ է քսաներորդ դարի գեղարվեստական համապատկերը ներկայացնել առանց Ջորջ Օրուելի «1984»-ի կամ առանց «Անասնագոմի»... Սրանք եւս չեն արժանացել ուշադրության, մինչդեռ այս վեպերը քսաներորդ դարին խիստ բնորոշ տոտալիտարիզմի դժնի կերպարը ներկայացնող լավագույններից են համարվում եւ, եթե ոչ լավագույնը:

Ուշ գրականությունը ներկայացված է այս կերպ. Մ. Բուլգակովի «Վարպետը եւ Մարգարիտան», Բ. Պաստեռնակի «Դոկտոր Ժիվագոն» եւ Ա. Սոլժենիցինի «Գուլագ արխիպելագը»: Բայց չէ՞ որ վերջինս վեպ չէ, գեղարվեստական հորինվածք չէ, այլ դաժան, ահասարսուռ փաստագրություն, պատմագիտական ծավալուն եւ խորունկ ուսումնասիրություն... Վստահ եմ, որ ցուցակը կազմողները հրաշալի գիտեին վեպի ժանրային առանձնահատկությունները, այդ դեպքում ինչպե՞ս հասկանալ այս ընտրությունը:

Սակայն դուրս են մնացել Ա. Շոլոխովի «Խաղաղ Դոնը», Իլֆի եւ Պետրովի «Տասներկու աթոռը», մի վեպ, որի զուգահեռն անկարելի է գտնել եվրոպական կամ ամերիկյան արձակում, Անդրեյ Պլատոնովի հանճարեղ եռապատումը, Եվգենի Զամյատինի «Մենք»-ը...

Ավստրիական գրականությունը ներկայացված է Ռոբերտ Մուզիլի «Մարդն առանց հատկությունների» վեպով, գուցե արվեստով գրված, բայց ծանրաբարո, դանդաղաշարժ պատումով եւ վերջապես անավարտ, բառիս բուն իմաստով կիսատ մնացած մի երկ: Ինչ որ է, Մուզիլը մեծ գրող է, սակայն ինչպե՞ս է պատահել, որ հարգարժան հանձնախումբն անուշադրության է մատնել ավստրիացի մեկ այլ մեծ գրողի՝ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը», որը բազմիցս հրատարակվել է Ֆրանսիայում... Կա՞ արդյոք մի գործ, որտեղ քսաներորդ դարի ամենածանր ոճիրը՝ ցեղասպանությունը, ավելի ցնցող ներկայացված լինի...

Եվ այսպես, պակասող վեպերից կարելի է ծանրակշիռ մեկ այլ ցուցակ կազմել, որը քանակով գուցե զիջի առաջինին, բայց որակով, անպայման համարժեք կլինի, իսկ տեղ-տեղ գուցե ավելին:

Կռահում եմ ընթերցողի հարցը. եթե 60-ի մեջ չկանք, կարո՞ղ ենք հայտնվել մյուս ցուցակում: Քսաներորդ դարում հայ գրականությունն արդյոք ստեղծե՞լ է այնպիսի վեպ, անգամ վեպեր, որոնք իրավամբ պիտի դրվեին մյուս լավագույնների կողքին, կարո՞ղ ենք երբեմն-երբեմն գլուխ ցցող մեր ազգային սնապարծությունը եւ վիրավորված արժանապատվությունը մի կողմ դնելով, սառը դատողությամբ, մեր ունեցածն ամենայն խստությամբ քննելուց հետո հայտարարել, որ կա այդպիսի գործ: Այո, կարող ենք, քանզի ունենք հանճարեղ մի վեպ՝ Երվանդ Օտյանի «Ընկ. Բ. Փանջունին», որն անպայման պիտի լիներ դարաշրջանի լավագույնների մեջ, եւ ուրիշ 3-4 վեպեր (Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրին», Շահան Շահնուրի «Նահանջը», Վազգեն Շուշանյանի «Սմրան գիշերները» եւ Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա»), որոնք կարող էին լինել:

Անցած դարի կարեւորագույն եւ բնորոշիչ առանձնահատկություններից մեկը սոցիալիստական-հեղափոխական գաղափարների ծավալուն եւ գործնական կիրառումն էր ամբողջ աշխարհում: Գրեթե բոլոր ժողովուրդներն անցան այդ խավարանով՝ երջանիկ կամ ողբերգական հետեւանքներով: Տասնյակ, եթե ոչ հարյուր միլիոնից ավելի ժողովուրդներ զոհվեցին այդ գաղափարների կենսագործման բագինին: Մարդկությունը մինչեւ հիմա շարունակում է փանջունիականության ծանր վերքերը բուժել: Եթե սոցիալիզմի ասիճանական եւ խոհեմ կիրառումը բարեբեր եղավ եվրոպական որոշ երկրների համար, ապա արեւելքի՝ Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի, վերջապես ԽՍՀՄ միլիարդավոր զանգվածների համար:

Բռնի, արհեստական, փանջունիական կիրառումն սկսելուց բավական տարիներ անց Անդրեյ Պլատոնովը, Ջորջ Օրուելը եւ ուրիշները պիտի հեսին թվով մարգարեներ դառնային, մինչդեռ իսկական, առաջին մարգարեն՝ Երվանդ Օտյանը, միայն տարիներ անց բոսխյան մռայլությամբ փաստեց անդառնալի ողբերգությունները:

«Լարուսից» դժգոհելու իրավունք չունենք: Անցած ավելի քան հիսնուն տարվա ընթացքում բացարձակապես ոչինչ չենք արել այդ վեպը միջազգային ասպարեզ հանելու համար: Նույնիսկ չգիտեմ, առ այսօր որեւէ լեզվով թարգմանվե՞լ է: Գոնե փորձ արվե՞լ է թարգմանելու: Գոնե մտածե՞լ են այդ մասին...

Գուցե ոմանք ասեն, թե սովորական փաստից չափազանցված հետեւություններ ենք անում: Ֆրանսիական հանրագիտարանի կարծիքն, անշուշտ, գրական միակ ու վերջին ատյանը չէ, սակայն այդ ցուցակը մի ավելորդ անգամ առիթ է տալիս խոսելու մի կարեւորագույն հարցի մասին՝ մեր ներկայության հաստատումն աշխարհում մեր մշակույթի միջոցով:

Հարցը դրվում է չափազանց կտրուկ եւ ամենայն անողոքությամբ. ուզո՞ւմ ենք արդյոք մեր ներկայությունը հաստատել աշխարհում, եթե՝ այո, հասկանո՞ւմ ենք արդյոք, որ մեր պարագայում մշակույթը պիտի դառնա հիմնական միջոցը, եթե հասկանում ենք, ապա մշակե՞լ ենք արդյոք մտածված ու հեռահար մի ծրագիր այդ նպատակին առավել արդյունավետությամբ հասնելու համար...

Ես վախենում եմ այս հարցերի իսկական, դաժան պատասխանը լսել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉՅԱՆ

Փարիզ

XX դարի լավագույն վեպերն ըստ «Լարուսի»

1. Մարսել Պրուստ «Դեպի Սվաննները»
2. Իտալո Զվեվո «Զենոյի ինքնագիտակցությունը»
3. Ֆրանց Կաֆկա «Դատավարություն»
4. Ուիլյամ Ֆոլկներ «Աղմուկ եւ ցասում»
5. Հենրի Ջեյմս «Դեսպաններ»
6. Անդրե Ժիդ «Վատիկանի նկուղները»
7. Լուի Արագոն «Փարիզի գյուղացին»
8. Ալֆրեդ Դյոբլին «Բերլին-Ալեքսանդերպլաց»
9. Ռոմեն Ռոլան «Ժան Քրիստոֆ»
10. Թոմաս Ման «Կախարդական լեռը»
11. Ժորժ Բերնանոս «Սատանայի արեւի տակ»
12. Ռայմոն Ռուսել «Տպավորություն Աֆրիկայից»
13. Ջեյմս জոյս «Ուլիս»
14. জոն-Դոս Պասոս «Անցում Մանհատանով»
15. Հերման Հեսսե «Տափաստանի գայլը»
16. Ռոբերտ Մուզիլ «Մարդն առանց հատկությունների»
17. Ռոժե-Մարտեն դյու Գար «Թիբոները»
18. Ֆրենսիս Սքոթ Ֆիցջերալդ «Հոյակապ Գեթսբին»
19. Դեյվիդ Հերբերտ Լոուրենս «Լեդի Չատերլիի սիրեկանը»
20. Վիրջինիա Վուլֆ «Ալիքներ»
21. Լուի-Ֆերդինանդ Սելին «Ուղեւորություն դեպի աշխարհի ծայրը»
22. Մարսել Էյմե «Կանաչ գամբիկը»
23. Դինո Բուցատի «Թաթարական անապատը»
24. Ժյուլիեն Գրին «Մոյրա»
25. Էռնստ Հեմինգուեյ «Ծերունին եւ ծովը»
26. Ալբեր Քամյու «Օտարը»
27. Ուիլյամ Գոլդինգ «Ճանճերի տիրակալը»
28. Ժյուլ Ռոմեն «Բարի կամքի մարդիկ»
29. Անդրե Մալրո «Մարդկային պայմանը»
30. Հենրի Միլլեր «Խեցգետնի արեւադարձը»
31. Ժան Ժիոնո «Հուսարը տանիքին»
32. Ալբերտո Մորավիա «Արհամարհանք»
33. Ժյուլիեն Գրաֆ «Սիրքի ծովափը»
34. Սեմյուել Բեքեթ «Մարֆի»
35. Մալոլմ Լաուրի «Հրաբխից վեր»
36. Վլադիմիր Նաբոկով «Լոլիտա»
37. Մարգարիտ Յուրսենար «Ադրիանի հուշը»
38. জոն Սթայնբեք «Ցասումի ողկույզները»
39. Մարգարիտ Դյուրաս «Մի պատնեշ խաղաղ օվկիանոսի դեմ»
40. Միշելինո Յուկիո «Ոսկե տաղավարը»
41. Խորխե-Լուիս Բորխես «Հորինվածքներ»
42. Միշել Բյուտոր «Փոխակերպում»
43. Գյունտեր Գրաս «Թմբուկը»
44. Ալեխո Կարպենտյեր «Լուսավորության դարը»
45. Հայնրիխ Բյոլ «Խմբանկար տիկնոջ հետ»
46. Իտալո Կալվինո «Կոտրած բարոնը»
47. Նաթալի Սարոտ «Մոլորակադարան»
48. Միխայիլ Բուլգակով «Վարպետը եւ Մարգարիտան»
49. Թոմաս Բերնհարդ «Վիտգենշտեյնի զարմիկը»
50. জեֆ Կերուակ «Ճանապարհին»
51. Բորիս Պաստեռնակ «Դոկտոր Ժիվագո»
52. Ալեն Ռոբ-Գրիյե «Խանդ»
53. Ալեքսանդր Սոլժենիցին «Գուլագ արխիպելագ»
54. Միլան Կունդերա «Անտանելի թեթեւություն»
55. Գաբրիել-Գարսիա Մարկես «Մենության հարյուր տարին»
56. Ժորժ Պերեկ «Կյանքի կիրառման կերպ»
57. Ալբեր Կոհեն «Տիրոջ գեղեցկուհին»
58. Տամիզակի Յունիշիրո «Ծեր խենթի օրագիրը»
59. Ումբերտո Էկո «Վարդի անվանումը»
60. Պոլ Օսթեր «Պոպակե քաղաք»

ԳՅՈՒՄՐԻ

Շիրազյան օրեր բանաստեղծի ծննդավայրում

Հովհաննես Շիրազի ծննդավայր Գյումրին միշտ էլ պաշտամունքի հասնող սեր է տածել համաքաղաքացի հանճարեղ քնարերգուի հանդեպ: Բանաստեղծի ծննդյան ապրիլի 27-ին լրացած 85-ամյակը բարեպաշտի առիթ է գեթ մի քանի օր կրկին հաղորդակցվելու նրա պոետական հորդաբուխ արվեստին, Շիրազի մտերիմների, նրա հետ շփված մարդկանց մատուցմամբ լսելու դրվագներ նրա ազգանվեր մեծ կյանքից, սրամիտ ու իմաստալից բանավոր խոսքից: Ծննդյան օրը քաղաքային զբոսայգում բանաստեղծի կիսանդրուն ծաղկադրումով, Գյումրիի մանկավարժական ինստիտուտի, գրադարանային համակարգի կազմակերպած հուշ-ցերեկույթներով, ապրիլի 29-ին քաղաքի հանդիսությունների տանը ներկայացված «Սիամանթո եւ Խջեզարե» միջոցառումներն այս օրերին շարունակվում են: Պոետի կիսանդրու մոտ կանցկացվի շիրազյան պոեզիայի տոն, հուշարձանի տարածքում վարդի թփեր կտնկվեն: Կցուցադրվի «Հավերժի ճամփորդը» վավերագրական կինոնկարը: Շիրազյան օրերը կնշվեն արվեստների պետական ինստիտուտում, Գյումրիի եւ Կամոյի Հովհաննես Շիրազի անվան հանրակրթական դպրոցներում: Քաղաքային ու մարզային այս եւ մյուս միջոցառումները կեզրափակվեն մայիսի 7-ին Վարդան Աճեմյանի անվան թատրոնի դահլիճում անցկացվելիք հանդիսավոր երեկոյով:

Այս տարվա աշնանը նաեւ լրանում է Շիրակի ծնունդ մյուս մեծ բանաստեղծի՝ Ավետիք Իսահակյանի ծննդյան 125-ամյակը: Գյումրիում ու նաեւ մարզում նախապատրաստական աշխատանք է կատարվում՝ ըստ արժանվույն նշելու այս տարելիցը եւս: Սակայն կա մի կարեւոր խնդիր, որն ինչպես Շիրազի, այնպես էլ Իսահակյանի պարագայում արդեն մեկ տասնամյակից ավելի մնում է չլուծված: Խոսքը դարձյալ վերաբերում է երկու բանաստեղծների Գյումրիի տուն-թանգարաններին, որոնցից մեկը (Շիրազինը) շարունակում է բնակեցված մնալ երկրաշարժից անօթեւան 5 ընտանիքներով, իսկ մյուսը (Իսահակյանինը) աղետից հետո խանդվել, նորից մեծ մասամբ կառուցվել ու այդպես էլ կիսատ մնացել է:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ՕՐՎԱԾՔԵՐ ՄԱՅԻՍԻ 4

- 1810 թ. ծնվել է ֆրանսիացի պետական գործիչ Ալեքսանդր Վալեւսկին: Շատ հետաքրքիր է նրա ծննդյան պատմությունը: Նապոլեոնի կյանքում բազում կանայք են եղել: Մարիա Վալեւսկայային ամենազոր կայսրը սիրահարվել է ավստրիական արշավի ժամանակ: Այդ սիրո պտուղն էր Ալեքսանդրը, որը հետագայում դարձավ դեսպան Եվրոպայի շատ երկրներում:
- 1839 թ. մահացավ ռուս բանաստեղծ Դենիս Դավիդովը: Նա 1812 թ. Հայրենական պատերազմի հերոսներից էր, որտեղ այլի էր ընկել անձնուրաց քաջությամբ եւ վճռականությամբ:
- 1929 թ. ծնվել է ամերիկացի դերասանուհի Օդրի Հեփբյորնը:
- 1931 թ. ծնվել է ռուս նվագավար Գենադի Ռոժդեստվենսկին:
- 1933 թ. մահացավ երգահան եւ հասարակական գործիչ Սոֆիդոն Մելիքյանը:
- Մ. թ. ա. 446 թ. ծնվել է հույն թատերգակ, ասպիկյան կատակերգության հիմնադիր Արիստոֆանը:
- Այս օրը հին հայկական տոմարով Ահեկան ամսվա Մարգար օրն է:

ՆԱՐԻԿ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

Մարզական

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ

Նոր հեռանկարներ մարզաձեւի համար

Գերմանիայի հյուսիսային քաղաք Բրեմենում ավարտվեց սեղանի թենիսի 2000 թ. Եվրոպայի առաջնությունը, որը 20-րդ դարի վերջին մեծագույն իրադարձությունն էր մարզաձեւում: Առաջնությունը անկյունադարձային էր ոչ միայն կարեւոր տեխնիկական ու կազմակերպչական փոփոխություններ ապրող այս մարզաձեւի համար: Այն նաեւ նորանոր հույսեր ներշնչող անմոռանալի օրեր պարգեւեց վերականգնվող հայկական սեղանի թենիսի դպրոցին: Առաջին անգամ, հանրապետական անկախ ֆեդերացիայի ստեղծումից հետո, Հայաստանը երկրորդ խմբում մի քարե փայլուն հաղթանակներ տանելով, իրավունք նվաճեց խաղալու ուժեղագույնների խմբի երկրորդ ենթախմբում՝ ծանր պատասխանատվություն ստանձնելով նաեւ մասնակցելու Եվրոպայի ազգերի գավաթի մրցաշարին, որը տեւում է 2 տարի:

Հայաստանի պատվիրակությունը Բրեմենում

Եվրոպայի առաջնության մասնակից Հայաստանի տղամարդկանց հավաքականը Բրեմեն էր ժամանել Սամվել Վարդանյան, Սմբատ Սարգսյան, Արամ Ջավադյան, Մուրադ Ասատրյան կազմով: Ցավալիորեն, Սիցիլիայում հանդես եկող մեր ուժեղագույն թենիսիստուհիները՝ համահայկական խաղերի եռակի չեմպիոնուհի Արմինե Մակինյանն ու Յուլյա Անդրյանը, չբարեհաջողեցին նվազագույն զոհողությամբ հասնել Բրեմեն, որտեղ բոլոր ծախսերը ստանձնել էր Եվրոպայի սեղանի թենիսի միությունը: Ինքնասիրության ու հայրենազուրկ ընչաքաղցության այս երեւույթը, դժբախտաբար, արտասահմանում խաղացող մեր որոշ վարպետների ցավալի հատկանիշներից է, որից երբեմն էլ չի հեռացրել դժվարին կացության մեջ գտնվող իրենց հայրենիքի մարզական պատիվը... Համենայն դեպս, Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ուղարկած թանկագին օգնությունը Հայաստանի սեղանի թենիսիստներին, ցանկալի հետեւանքներ ունեցավ: Ֆրանսիան, ֆրանկոֆոն երկրների սեղանի թենիսի միությունը, Լյուքսեմբուրգը, Գերմանիայի սեղանի թենիսի ֆեդերացիան, Ռուսաստանը, Հունաստանը, Կիպրոսը ոչ միայն գործնական քայլեր ձեռնարկեցին օգնելու Հայաստանին, այլեւ մի քարե հրավերներով բարձր գնահատեցին մեր տղաների վարպետությունն ու պատվիրակության ղեկավարների ջանքերը՝ վերականգնելու Հայաստանի սեղանի թենիսի երբեմնի փառքը: Իմիջիայլոց, մի անգամ եւս Հայաստանի սեղանի թենիսի ֆեդերացիայի նախագահ Ռոբերտ Ասատրյանը ընտրվեց Եվրամիության սեղանի թենիսի զարգացման կոմիտեի անդամ՝ աջակցությամբ Ռուսաստանի ֆեդերացիայի նախագահ, Եվրոպայի սեղանի թենիսի միության փոխնախագահ Յուրի Պասեւինի:

Վերադառնալով Բրեմենի «Շտադիալեում» ծավալված մրցաշարին՝ ասենք, որ թիմային գավաթը Շվեդիայի կողմից նվաճվելուց հետո նույն թիմի «ամենաթույլ» անդամը՝ Պետեր Կառլսոնը նվաճեց Եվրոպայի չեմպիոնի կոչումը՝ 3-0 հաշվով պարտության մատնելով խորվաթ Զորան Պրիմորակին: Կանանց չեմպիոնուհի դարձավ ծագումով չին՝ այժմ Գերմանիայի չեմպիոնուհի Գիանխոն Գյոթչը: Նա եզրափակիչում 3-2 հաշվով հաղթեց ռումինուհի Միխայելա Շթեֆին:

Թիմային պայքարի հոգնածությունն իր հետքը թողել էր անցյալ տարիների չեմպիոններ Վլադիմիր Սամսոնովի (Բելառուս) եւ Յան Ուվե Վալդների (Շվեդիա) վրա, որոնք անկարող եղան կրկնելու իրենց հաջողությունները:

ՀԱՄՈ ՄՈՍԿՈՖՅԱՆ

Բրեմեն-Երեւան

ՖՈՒՏԲՈԼ

Լրագրողները խաղում են եւ հաղթում

Լրագրողների թիմի հաղթանակով ավարտվեց մինի ֆուտբոլի մրցաշարը, որն անցկացվեց Երեւանում: Մրցաշարը կազմակերպել էր Մանկան առողջության պահպանման ասոցիացիան, որը գլխավորում են Հայաստանի արտաքին գործերի նախարարի տիկինը՝ Նանե Օսկանյանը եւ ակադեմիկոս Վիլեն Ասլվածատրյանը: Հատկանշական է, որ մրցաշարից գոյացած ողջ հասույթն ուղղորդվեց բարեգործական նպատակների՝ նախադպրոցական տարիքի երեխաների հիվանդության եւ ֆիզիկական զեղումների կանխարգելման աջակցությանը: Նշենք, որ մրցումների հովանավորներն էին «Պուա» եւ «Դիադորա» խանութները, Առէկսիմբանկը:

Սկզբում երեք թիմեր մրցեցին շրջանային մրցակարգով: Լրագրողները ոչ-ոքի (5-5) ավարտեցին խաղը ժողովրդատնտեսական բեռներ ուղեկցող վաշտի թիմի հետ, ապա 7-3 հաշվով հաղթեցին ՄԱՊԱ-ի բժիշկ-ֆուտբոլիստներին: Քանի որ լրագրողների եւ ուղեկցող վաշտի թիմերը հավասար՝ 4-ական միավոր էին հավաքել, մրցակարգի համաձայն նրանց միջեւ գագաթախաղ անցկացվեց: Այս մրցախաղն ավարտվեց լրագրողների դժվարին հաղթանակով՝ 3-1 հաշվով: Մրցաշարի լավագույն ռմբարկու դարձավ Արմեն Ախեյանը, որը 10 գնդակ խփեց, իսկ լավագույն դարպասապահ ճանաչվեց Գեւորգ Շեգունցը: Երկուսն էլ լրագրողների թիմից են:

Հաղթողների կազմում խաղում էին Գեւորգ Շեգունցը («Ա1+» հեռուստաընկերություն), Ալյոշա Մանվելյանը (BBC ռադիոկայան), Աշոտ Լեւոնյանը («Գոլոս Արմենիի» թերթ), Վարդգես Ավետիսյանը (Երեւանի քաղաքապետարանի մամլո ծառայության ղեկավար), Կոնստանտին Պետրոսովը, Արմեն Ախեյանը (երկուսն էլ՝ «Առկա»), Դմիտրի Պիսարենկոն (Հայաստանում ՆՏՎ հեռուստաընկերության սեփ. թղթակից) եւ թիմի ավագ Տիգրան Հովհաննիսյանը (Հայաստանում «Ինտերֆաքսի» սեփ. թղթակից): Թիմի մարզիչն է «Արարատի» նախկին խաղացող Աշոտ Յարդումյանը:

...Ֆուտբոլով «հիվանդացած» լրագրողները թիմում միավորվել որոշեցին անցյալ տարվա սեպտեմբերին, երբ հրավեր ստացան մասնակցելու ԱՊՀ երկրների լրագրողների՝ Սանկտ Պետերբուրգում կայանալիք առաջին միջազգային մրցաշարին: Մրցաշարից մրցաշար ՁԼՄ-ների ներկայացուցիչ ֆուտբոլիստները բարելավում են իրենց խաղը, ինչի արդյունքն էր վերջին հաղթանակը: Այժմ լրագրողները ընկերական հանդիպումներ են անցկացնում արտասահմանյան դեսպանությունների թիմերի հետ: Մեզ հաջողվել է խոշոր հաշվով (17-11) հաղթել ֆուտբոլի հայրենիքի՝ Մեծ Բրիտանիայի դեսպանության թիմին, իսկ Իրանի դեսպանության թիմի հետ ոչ-ոքի (4-4) ենք խաղացել: Առաջիկայում նախատեսվում է լրագրողների եւ Գերմանիայի դեսպանության թիմերի մրցախաղը:

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանում «Ինտերֆաքսի» սեփական թղթակից

ՇԱԽՄԱՏ

Առաջատարների խմբում

Արաբական Միացյալ Էմիրություններում՝ Դուբայում անցկացվում է շախմատի խոշոր մրցաշար: «Շեյխի գավաթ» անվանումը կրող 2-րդ մրցաշարում հանդես են գալիս տարբեր երկրների 70-ից ավելի շախմատիստներ, որոնցից շուրջ 3 տասնյակը գրոսմայստերներ են: Մասնակիցների թվում են նաեւ Հայաստանի չորս ներկայացուցիչներ՝ գրոսմայստերներ Վլադիմիր Հակոբյանը (ի դեպ, նա հաղթել է «Շեյխի գավաթի» առաջին խաղարկությունում), Սմբատ Լպուտյանը, Աշոտ Անաստասյանը եւ Կարեն Ասրյանը:

Շվեյցարական մրցակարգով անցկացվող մրցաշարի 9 տուրերից 4-ն արդեն խաղացվել են: 3,5-ական միավորով առաջատարը գլխավորում են Անաստասյանը, Ա. Կուզմինը, Խալովը, Երմենկովը, Արխիպովը եւ Նենաշեւը: Առաջատարներից մի փոքր են ետ մնում 8 շախմատիստներ, որոնք 3-ական միավոր են վաստակել: Այդ խմբում են նաեւ Հակոբյանն ու Ասրյանը: Լպուտյանն ունի 2 միավոր եւ գտնվում է աղյուսակի միջնամասում:

Առջեւում Տիգրան Նալբանդյանն է

Շախմատիստի կենտրոնական տանը շարունակվում է Հայաստանի տղամարդկանց հոբելյանական՝ 60-րդ առաջնության առաջին խմբի մրցաշարը, որը միաժամանակ Երեւանի բաց առաջնություն է հանդիսանում: Նշենք, որ այս մրցումները նվիրված են հայկական շախմատի երախտավորներից մեկի՝ շախմատային գործի կազմակերպիչ, համամիութենական կարգի մրցավար Մկրտիչ Կուլոզյանի հիշատակին, որի ծննդյան 85-ամյակը լրանում է այս տարի:

Մրցաշարը չափազանց լարված ու հետաքրքիր պայքարում է ընթանում: Հիշեցնենք, որ առաջին երեք տեղերը գրաված մասնակիցներն իրավունք են ստանում հանդես գալու հանրապետական առաջնության բարձրագույն խմբի մրցաշարում, դրանից բացի խաղարկվում է նաեւ մինչեւ 20 տարեկան պատանիների աշխարհի առաջնության մեկ ուղեգիր:

Մրցաշարում հինգ տուր է անցկացվել: Միանձնյա առաջատարը միջազգային վարպետ Տիգրան Նալբանդյանն է, որը 4,5 միավոր է վաստակել: Նրանից կեսական միավոր պակաս ունեն Տիգրան Լ. Պետրոսյանը եւ կանանց միջազգային գրոսմայստեր Էլինա Դանիելյանը: Նրանց հետեւում են հինգ մասնակիցներ, որոնք 3,5-ական միավոր են վաստակել:

«Վալենսիայի» լուրջ հայտը

Անցկացվեց ֆուտբոլի Չեմպիոնների լիգայի կիսաեզրափակիչ փուլի առաջին հանդիպումը իսպանական երկու թիմերի՝ «Վալենսիայի» ու «Բարսելոնի» միջեւ:

Դաշտի տերերը «Վալենսիայի» ֆուտբոլիստներն, կրկին մեծ վերելքով հանդես եկան: Իրենց ավելի հեղինակավոր հայրենակիցներին նրանք հաղթեցին 4-1 հաշվով եւ եզրափակիչ մտնելու լուրջ հայտ ներկայացրին:

10-րդ րոպեին Միխել Անգելոն առաջին գոլը խփեց հյուրերի դարպասը: 27-րդ րոպեին հաշիվը հավասարվեց. բարսելոնցի Բուդեվեյն Չենդենը ձախ եզրից գնդակն ուղարկեց «Վալենսիայի» տուգանային հրապարակ, իսկ պաշտպան Մաուրիցիո Պելեգրինոն, փորձելով չեզոքացնել վտանգը, սխալվեց եւ գնդակի ուղղությունը փոխեց դեպի... սեփական դարպասը: 43-րդ րոպեին «Վալենսիան» կրկին առաջ անցավ. իր 2-րդ գոլը խփեց Անգուլոն: Խաղակեսի վերջին րոպեին դաշտի տերերը նոր հաջողության հասան. «Բարսելոնի» խաղացողներն իրենց տուգանային հրապարակում խախտեցին կանոնները, եւ «Վալենսիայի» ավագ Գաիզկա Մենդիետան 11 մ տուգանային հարվածով հաշիվը դարձրեց 3-1: Եվս մեկ դարպասի գրավում արձանագրվեց հանդիպման վերջին րոպեին, երբ Կլաուդիո Լոպեսը հիանալի հարվածով վերջակետ դրեց՝ 4-1:

Գնդակի համար պայքարում են Մենդիետան եւ Ռիվալդոն

Այս երկու թիմերի պատասխան հանդիպումը տեղի կունենա Բարսելոնում, մայիսի 10-ին:

Ինչ վերաբերում է «Ռեալ» (Իսպանիա)-«Բավարիա» (Գերմանիա) կիսաեզրափակիչ մյուս խաղին, ապա այն ավարտվեց անցած գիշեր:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է ՌԱՉՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Խոպան: 2. Մարկ: 3. Օմար: 4. Վաքան: 7. Շայբոն: 8. Աղոթեմ: 9. Թայսոն: 13. Արշակավան: 14. Անանիկյան: 17. Դակար: 18. Հաշիս: 19. Ալֆ: 20. Պար: 23. «Կազինո»: 25. Աղորիք: 26. Օղեան: 30. Տաքլե: 31. Մասնե: 33. Առկա: 34. Ապել:

Հորիզոնական

5. Բորման: 6. Ամարաս: 10. «Սաբահ»: 11. Կաղար: 12. Կաղան: 15. Արմսթրոնգ: 16. «Մոնդ»: 18. Հնոց: 19. Ամոթ: 21. Չկնկուլ: 22. Արիշա: 24. Քար: 27. Մայր: 28. Սաաա: 29. Մաքեւոյան: 32. Անգար: 33. Աթիլա: 35. Մագան: 36. Գլինկա: 37. Բելինի:



ԽԱՉԲԱՌ

Ուղղահայաց

1. Նիգերիայի ֆուտբոլի հավաքականի առաջատար խաղացող: 2. Հայկական ֆուտբոլային թիմ, որին մարզում է Արկադի Անդրեասյանը: 3. Ֆրանսիացի ֆուտբոլիստ, 1998 թ. աշխարհի չեմպիոն: 4. 1997 թ. Հայաստանի ֆուտբոլի չեմպիոն թիմ: 7. «Արարատի» նախկին գլխավոր մարզիչ (1966-67 թթ.): 8. Կոլումբիացի ֆուտբոլիստ, «Ֆրանսիա-98»-ի մասնակից: 10. Հայաստանի ֆուտբոլի հավաքականի գլխավոր մարզչի օգնական: 13. Մոսկվայի «Սպարտակի» եւ Ռուսաստանի ֆուտբոլի հավաքականի կիսապաշտպան: 14. Պարագվայցի ֆուտբոլիստ, «Ֆրանսիա-98»-ի մասնակից: 17. 1980-ականների ֆրանսիացի հայտնի թենիսիստ: 18. Անգլիայի ֆուտբոլի հավաքականի կիսապաշտպան: 21. Ֆրանսիական «Մոնակո» թիմի իտալացի ֆուտբոլիստ: 23. Անգլիացի ֆուտբոլիստ, «Ֆրանսիա-98»-ի մասնակից: 26. Մեքսիկական ֆուտբոլի լավագույն խաղացողներից: 27. Հունգարացի հայտնի շախմատիստուհի: 28. Իտալական առաջատար ֆուտբոլային ակումբ: 30. Գերմանական ֆուտբոլային ակումբ:

Հորիզոնական

5. Նիգերիացի ֆուտբոլիստ, «Ֆրանսիա-98»-ի մասնակից: 6. Կոլումբիայի ֆուտբոլի հավաքականի խաղացող: 9. Մակեդոնացի ֆուտբոլիստ, որը խաղացել է Միլանի «Ինտերում»: 11. Մադրիդի «Ռեալի» ֆուտբոլիստ: 12. «Միլանի» նախկին գլխավոր մարզիչ: 15. Ավստրիական «Շտուրմի» ֆուտբոլիստ: 16. Ճամայկայի հավաքականի առաջատար ֆուտբոլիստ: 17. ՀԱՀ-ի ֆուտբոլի հավաքականի պաշտպան: 19. Ֆրանսիական ֆուտբոլային ակումբ: 20. Անգլիայի հավաքականի ֆուտբոլիստ: 22. Անգլիացի հայտնի շախմատիստ: 24. Իտալական «Միլանի» գերմանացի ֆուտբոլիստ: 25. Հոլանդիայի հավաքականի ֆուտբոլիստ: 29. Բուլղարացի ֆուտբոլիստ, 1994 թ. աշխարհի առաջնության խորհրդանշական հավաքականի անդամ: 31. Հնդիկ աշխարհահռչակ շախմատիստ: 32. Ռուսաստանի ֆուտբոլի հավաքականի հարձակվող: 33. Մեքսիկացի ֆուտբոլիստ, «Ֆրանսիա-98»-ի մասնակից: 34. Իտալիայի հավաքականի եւ «Միլանի» նախկին ֆուտբոլիստ:

Կազմեց ՆԱՐԵԿ ՏՈՆՈՅԱՆԸ

ՀԱՄԱՌՈՏ

Թել Ավիվը չի աջակցում ոչ հայկական եւ ոչ էլ թուրքական կողմին

ՍՏԱՄԲՈՒԼ, 3 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. «Թուրքիա դեյլի նյուզ» օրաթերթն իր այսօրվա համարում տեղեկացնում է, որ երեքշաբթի Իսրայելը պատասխանել է Հայոց ցեղասպանության հարցի շուրջ պարզաբանումներ տալու Թուրքիայի պահանջին: Իսրայելի արտգործնախարարությունը հայտարարել է, որ չի պատրաստվում փոխել իր տեսակետը հայկական ցեղասպանության խնդրի շուրջ: Այդ հայտարարությունը Իսրայելի ԱԳՆ-ի կողմից որակվել է իբրեւ «անձնական տեսակետ»: Ըստ թուրքական թերթի, իսրայելական դիվանագետներից մեկը հայտարարել է, որ Թել Ավիվը չի աջակցում ոչ հայկական եւ ոչ էլ թուրքական կողմին: «Մենք չենք ցանկանում, որպեսզի նշված հարցը քաղաքականացվի: Դեռեւս 1995 թվականին Իսրայելը պաշտոնապես հայտարարել է, որ Հայոց ցեղասպանությունը պատմաբանների, այլ ոչ թե դիվանագետների քննարկման առարկան է», նշել է նա:

Հայաստանի ֆինանսական շուկան չարձագանքեց վարչապետի պաշտոնանկմանը

ԵՐԵՎԱՆ, 3 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Հայաստանի ֆինանսական շուկան չարձագանքեց ՀՀ նախագահի կողմից վարչապետի պաշտոնանկմանը: Սովորաբար այդ իրադարձությանը հետեւում է շուկայական գործակիցների փոփոխություն: Բորսայական առեւտրի առկայության դեպքում տեղի են ունենում արժեթղթերի գների կտրուկ տատանումներ, իսկ բորսաների բացակայության դեպքում անմիջապես կտրուկ արժեզրկվում է ազգային դրամը: Սակայն մայիսի 3-ին ՀՀ դրամի փոխարժեքը (1 դոլարի դիմաց 530-532 դրամ) մնաց կայուն: Ընդհանրապես, վարչապետերի փոփոխությունը Հայաստանում չի բերում դրամի փոխարժեքի տատանումների: Այդ երեւույթն արդեն արձանագրվել է վերջին երեք վարչապետերի փոփոխության ընթացքում:

Հաղարծին գյուղի մոտ սողանքից ավերվել է երկաթգիծը եւ ծածկվել մայրուղին

ՏԱՎՈՒՇ, 3 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Տավուշի մարզի Դիլիջանի տարածքի Հաղարծին գյուղի մոտ՝ Իջեւան-Հրազդան երկաթգծի 69-րդ կիլոմետրում, սողանքի հետեւանքով հողի զանգվածները, ավերելով երկաթգիծը, արդեն ծածկել են ավտոմայրուղին: Սողանքը հատկապես վտանգավոր է գյուղի 3 առանձնատների համար. մասնագիտական ուսումնասիրություններից հետո որոշվել է այդ 3 տների բնակիչներին տեղափոխել՝ որպես փոխհատուցում նրանց տրամադրելով համապատասխան գումար, սակայն մինչ օրս այդ գումարները չեն տրվել: Օրերս Հաղարծին գյուղում Տավուշի մարզպետի անցկացրած արտագնա խորհրդակցության ժամանակ որոշվել է այդ գումարների մասին շտապ հեռագիր ուղարկել կառավարություն:

Կողբ գյուղի մի բնակիչ դանակահարել է էլեկտրացանցի աշխատողին

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, 3 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Ինչպես հայտնում է «Նոյյան տապանի» թղթակիցը Տավուշից, օրերս մարզի Կողբ գյուղի մի բնակիչ դանակով հարվածել է Նոյեմբերյանի էլեկտրացանցի աշխատողի պարանոցին. վերջինս եկել էր պարտքի դիմաց անջատելու բնակչի էլեկտրասնուցումը: Դատաբժշկական փորձաքննությունը ներկայումս պարզում է, թե որքանով է պատճառված վնասվածքը վտանգավոր առողջության համար, իսկ Նոյեմբերյանի ՆԳ բաժինը դեպքի կապակցությամբ քննություն է կատարում:

Անվճար երթեւեկություն էլեկտրական տրանսպորտով

ԵՐԵՎԱՆ, 3 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Մայիսի 3-ին ՀՀ ԱԺ-ն երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց «Ներքաղաքային վերգետնյա եւ ստորգետնյա էլեկտրական տրանսպորտի միջոցներով կենսաթոշակային տարիքի կենսաթոշակառուների եւ առաջին ու երկրորդ խմբի հաշմանդամների անվճար երթեւեկելու մասին» օրենքը: Պաշտոնական հրապարակման պահից օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում ՀՀ կառավարությունը պետք է առաջարկի նշված կատեգորիաների անձանց անվճար երթեւեկության վկայականներով:

ԳՅՈՒՄՐԻ

Սոցներդրումների հիմնադրամը եւս մեկ դպրոց կկառուցի

Գյումրիի Մեսրոպ Մաշտոցի անվան հանրակրթական միջնակարգ դպրոցը քաղաքում դեռեւս մեծամասնություն կազմող այն կրթօջախներից է, որոնք 88-ից առ այսօր գործում են ժամանակավոր տնակային պայմաններում: Այս դպրոցի համար նոր շենքի կառուցումն իր ընթացիկ տարվա շինարարական ծրագրում ընդգրկելու պատրաստակամություն է հայտնել Հայաստանի սոցներդրումների հիմնադրամը: Ամեն ինչ կվճռվի հիմնադրամին Համաշխարհային բանկի կողմից համատեղ երկրորդ ծրագրով վարկային միջոցների հատկացումից հետո, որն ակնկալվում է ամռան սկզբին: Այս նպատակի համար տրամադրվում է առավելագույնը 150 հազար դոլարի ներդրում: Դա նշանակում է 250 աշակերտական տեղով շենքի կառուցում, մինչդեռ դպրոցում այսօր սովորում է շուրջ 700 աշակերտ: Պարզվում է՝ ծրագիրը կարող է ունենալ նաեւ երկրորդ փուլ, որի ժամանակ էլ հնարավոր կլինի կառուցել եւս մեկ մասնաշենք: Ինչ մնում է համայնքի կողմից 10 տոկոս պարտադիր ֆինանսական ներդրման դժվարին խնդրին, տնօրենի հավաստմամբ, հիմնականում իրենց միջոցներով հոգալու պատրաստակամություն են հայտնել քաղաքապետարանն ու Շիրակի մարզպետարանը:

Գ. Մ.

ACBA Հայգյուղփոխբանկ

ACBA բանկը հրավիրում է աշխատանքի

մինչեւ 26 տարեկան տղամարդկանց հետեւյալ պաշտոններում աշխատելու համար

Ծրագրավորողների

թեկնածուներին ներկայացվող պահանջները. աշխատանք MS ACCESS, VISUAL BASIC միջավայրում, կրթությունը՝ բարձրագույն, անգլերենի իմացությունը ցանկալի է:

Օպերատորների

թեկնածուներին ներկայացվող պահանջները. կրթությունը՝ բարձրագույն տնտեսագիտական, անգլերենի գերազանց տիրապետում:

Վարկային գործակալ

Թեկնածուներին ներկայացվող պահանջները. կրթությունը՝ բարձրագույն տնտեսագիտական կամ բարձրագույն գյուղատնտեսական:

Ցանկացողները կարող են ներկայացնել ինքնակենսագրությունը մինչեւ մայիսի 15-ը, հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Բայրոնի 1

Հեռ.՝ 52-51-69

GlaxoWellcome Armenia Representative Office

HIRING ANNOUNCEMENT

POSITION - MEDICAL REPRESENTATIVE

QUALIFICATION

- Strong interpersonal and communication skill.
- Organization talent and commercial feeling.
- Very good knowledge of English.
- Computer literate (PC).
- Communicate well with other doctors.
- International travel experience, working in experience is plus.

The candidate must have medical or public health degree and minimum 5 year of experience in the medical institutions.

Send to the attention of Dr. A. Khachatryan, Country Manager of ***GlaxoWellcome*** Armenia

The deadline for the submission of resume is May 9, 2000

ADDRESS:
GlaxoWellcome Armenia
7, Baghramyan Ave.,
Yerevan 375019 Armenia
Tel: +003742 569157
Fax: +003742 151415
E-mail: helen@arminco.com

AED
Academy for Educational Development
USAID

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID) եւ Կրթական զարգացման ակադեմիան (AED)

տեղեկացնում են

տնտեսական թեմաներով գրող լրագրողներին, որ «Անցման շրջանի տնտեսությունների հիմնախնդիրները» զեկուցումների շարքի հերթական հանդիպումը կկայանա **մայիսի 5-ին, ժամը 11:30-ին,** Թեֆեյան կենտրոնում *(Խանջյան 50)*:

Հանդիպմանը կմասնակցեն

ՀՀ արժեթղթերի շուկայի տեսչության պետ

Տիգրան Կարապետյանը,

USAID/PriceWaterhouseCoopers-ի կապիտալի շուկայի զարգացման ծրագրի ղեկավար

Դոնալդ Հարթը

եւ USAID/PriceWaterhouseCoopers-ի կապիտալի շուկայի զարգացման ծրագրի ավագ իրավաբան

Դավիթ Սարգսյանը

Թեման՝ **«ՀՀ կապիտալի շուկայի զարգացման հեռանկարների վերլուծությունը»:**

HUJ 1965 թ. գործող Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբը, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կամավորական ծառայության կոմիտեի անդամ է, հրավիրում է մասնակցելու Եվրոպայի երկրներում, ԱՄՆ-ում, Հայաստանում միջազգային աշխատանքի դիմումները ընդունվում են հետեւյալ հասցեով՝ Կորյունի 19ա, 7-րդ հարկ
Հեռ. 52 27 01, 52 27 72, 52 27 88

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱԳՐԵՐ

4 Մայիս

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
10.10 Մանրամասներ
10.20 Սամուլի կրպակ
10.30 Բոհեմ
11.05 Գ/Ֆ «Շնահյուսք»
12.45 Մուլտֆիլմ «Գույնզգույն պատմություն»
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 «Արեւիկ»
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
19.00 1 լուր
19.10 «Խոշոր շահում»
(Նույն ժամին արբանյակային հեռարձակմամբ
19.10 Կեսգիշերային ճեպընթաց)
19.50 Հայի տասներկու դեմքը
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակատաղոգ
21.50 Պրեմիերա
22.00 «Բարի ակնքարք»
22.50 Հեռուստամարաթոնի էջերից
23.10 Հիթ շերտ
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեպընթաց
01.00 Ռուբիկոն+

Պրոմեթեւս

9.00 «Բարի լույս, Հայաստան»
10.00 «Ամեն ինչ հանուն էն սիրո»
18.00 Մուլտֆիլմ
18.10 Մանկական ժամ. սերիալ «Նինձյա կրիաները», սերիալ «Քոնան»
19.00 «Ամեն ինչ հանուն էն սիրո»
20.00 Լաբեր
20.35 Ռ. Մավիսակյանի ծրագիրը. «Հարցեր»
21.20 Օրը
22.25 «1-02» լրատու
22.35 «Ջեղնահարկ»
22.55 Գ/Ֆ «Էքսպազի»

9.00 Տոմար
10.30 Կամ-կամ (կրկնություն)
19.05 Ջոջիկ
19.30, 21.30, 00.00 Սուրհանդակ
20.00 Սամուլի խոսնակ
20.10 Ի դեմ
20.30 Ատպարեզ
21.10 Հրապարակ
22.05 «Ժաննա դը Արկ» (1-ին սերիա)
00.35 Ակնքարք
00.40 Գ/Ֆ «Ռոնին» (ավարտին Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Տոնի Քվեսթի անհավանական արկածները»
16.40 Վիկտորինա երեխաների համար
17.00 «100 տոկոս» ծրագիրը
17.25 ...Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.30 ԿՔՀ-մոլորակ
20.00 «Մարդը եւ օրենքը»
20.45 Գ/Ֆ «Նրանք մարտնչում էին հանուն հայրենիքի» (2-րդ սերիա)
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.50 Գ/Ֆ «Թունել» (դերերում՝ Ա. Լոկտեւ, Ի. Դիկիսյանը, Վ. Մալյավինա. ՍՍՀՄ-Ռուսիա, 1966 թ.)
00.40 Հոկեյ. աշխարհի առաջնություն. Շվեդիայի հավաքական-Բելառուսի հավաքական
(01.20 Նորություններ)

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20- 10.30 Բարի լույս, Ռուսաստան
7.35, 9.35 Ընտանեկան նորություններ
9.20 Հեռուստատեսային ՀՄՍ. հերթապահ բաժանմունք
10.40 «Արենա-սպորտ»
11.20 Սերիալ «Գնչուհին»
12.05 Սերիալ «Սանտա Բարբարա»
13.00 Հեռուստատեսային ՀՄՍ
13.25 Իմ XX դարը
14.00, 18.00, 21.00, 00.00 Լուրեր
14.30 «Կանանց քաղաք»
15.05 Սերիալ «Սեւ մարգարիտ»
15.50 Սերիալ Հարուստներն ու նշանավորները»
16.45 Նոր «Հին բնակարան»
17.40 Մուլտծրագիր
18.30 Աստղակ
18.55 Երկխոսություններ ծկնորսության մասին
19.25 Կինո+TV
20.25 «Վինո-տոմ-կուր»
21.45 Սերիալ «Վայրի հրեշակը»
22.45 Հոկեյի աշխարհի առաջնություն. Ֆինլանդիա-Սլովակիա
01.35 Հեռուստատեսային ՀՄՍ. հերթապահ բաժանմունք
01.50 Նորաձեւություն+TV
02.45 Թեժ տասնյակ

ԼՈՒԾԱՐՎՈՒՄ է

«Հարություններ» ընտանեկան ձեռնարկությունը՝ գրանցված 10.09.1997 թ. ՀՀ պետռեգիստրում: Գրանցման համարը 56.030.00588, վկայականի համարը 037309:

Ձեռնարկության հետ վերջնահաշվարկների համար երկամսյա ժամկետում դիմել Արագածոտնի մարզ, գյուղ Կարբի:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատվեր 1252 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 3. 05. 2000 Գինը՝ 100 դրամ